«Յուքոմ» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2023թ. համար

Սույն հաշվետվությունը սկզբնապես պատրաստվել է անգլերեն, իսկ այնուհետև թարգմանվել հայերեն՝ ընթերցողների հարմարության համար: Անգլերեն և հայերեն տարբերակների միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

**Բովանդակություն**


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 4 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 7 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն | 8 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 9 |
| Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 10 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 11 |

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

## Անկախ սաուդիտորի եզրակացություն

*Ներկայացվում է «Յուքոմ» ՓԲԸ-ի բաժնետերերին*

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Յուքոմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և վերջինիս դուստր ձեռնարկության (այսուհետ միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագրությունը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը՝ 2023թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների ՀՀՍՄԽ հրապարակման (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:
Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի *(ներառյալ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք)*, և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:
Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներն համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

**Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- նույնականացնում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա եզրակացնում ենք, թե արդյոք տեղին է հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառումը ղեկավարության կողմից և, թե՝ արդյոք առկա է էական անորոշություն՝ Ընկերության անընդհատ գործելու կարողությունը նշանակալի կասկածի տակ դնող դեպքերի կամ պայմանների հետ կապված: Եթե գտնում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները համարժեք չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագայում տեղի ունեցող դեպքերը կամ ի հայտ եկող հանգամանքները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը.

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը և կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

29 օգոստոսի 2024թ.
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Սերգեյ Յակովլև, FCCA
Աուդիտի ղեկավար

| հազ. դրամ | Ծնթ. | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 10 | 34,565,902 | 34,833,028 |
| Ոչ նյութական ակտիվներ | 11 | 58,700,913 | 31,381,809 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 12 | 6,904,517 | 7,901,834 |
| Կանխավճար շահութահարկի գծով | | 340,876 | 340,876 |
| Տրամադրված փոխառություններ | 13 | 1,376,893 | 1,376,893 |
| Կանխավճարներ և այլ ակտիվներ | | 1,683,525 | 449,871 |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | **103,572,626** | **76,284,311** |
| Պաշարներ | 14 | 1,613,892 | 1,603,038 |
| Պայմանագրի գծով ակտիվներ | | - | 158,005 |
| Առևտրական դեբիտորական պարտքեր | 5,23 | 6,310,421 | 6,941,406 |
| Ստացվելիք ԱԱՀ | | 206,104 | 316,054 |
| Կանխավճարներ և այլ ակտիվներ | | 485,586 | 365,657 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքներ | 15 | 952,913 | 975,206 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | **9,568,916** | **10,359,366** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **113,141,542** | **86,643,677** |
| **Սեփական կապիտալ** | 16 | | |
| Բաժնետիրական կապիտալ | | 23,903 | 23,903 |
| Կուտակված վնաս | | (19,028,017) | (24,591,122) |
| Լրացուցիչ կապիտալ | | 35,084,845 | 35,084,845 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **16,080,731** | **10,517,626** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 19 | 36,885,306 | 38,478,801 |
| Պահուստներ | 20 | 1,796,401 | 2,344,938 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 12 | 6,809,454 | 5,708,570 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 22 | 27,318,405 | - |
| Պայմանագրի գծով պարտավորություններ | 21 | 7,057,151 | 7,537,734 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **79,866,717** | **54,070,043** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 19 | 3,934,449 | 4,211,927 |
| Այլ պարտավորություններ | | 120,607 | 120,608 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 12 | 2,187,516 | 3,945,037 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 22 | 10,101,928 | 12,971,661 |
| Պայմանագրի գծով պարտավորություններ | 21 | 849,594 | 806,775 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | **17,194,094** | **22,056,008** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **97,060,811** | **76,126,051** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **113,141,542** | **86,643,677** |

*«Յուքոմ» ՓԲԸ*
*Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2023թ. համար*

| հազ. դրամ | Ծնթ. | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|---|
| Հասույթ | 5 | 38,308,098 | 36,254,172 |
| Այլ եկամուտ | 6 | 5,339,155 | 1,082,860 |
| Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր | | (11,221,324) | (11,756,116) |
| Ոչ նյութական ակտիվների արժեզրկման հակադարձում/(արժեզրկում) | | 2,306,000 | (2,164,266) |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (7,180,680) | (6,490,068) |
| Առևտրային դեբիտորական պարտքերի կորուստների գծով (արժեզրկում)/արժեզրկման հակադարձում | | (227,286) | 155,258 |
| Այլ ծախսեր | 7 | (15,458,877) | (15,805,880) |
| **Գործառնական գործունեության արդյունքներ** | | **11,865,086** | **1,275,960** |
| Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից | 8 | (1,307,942) | 9,048,207 |
| Ֆինանսական եկամուտ | 8 | 5,878 | 9,187 |
| Ֆինանսական ծախսեր | 8 | (4,999,917) | (6,078,475) |
| **Զուտ ֆինանսական (ծախս)/եկամուտ** | | **(6,301,981)** | **2,978,919** |
| **Օգուտ նախքան շահութահարկով հարկումը** | | **5,563,105** | **4,254,879** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | **5,563,105** | **4,254,879** |

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. օգոստոսի 29-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Ռալֆ Յիրիկյան
Գլխավոր տնօրեն

Սյունե Փարսյան
Ֆինանսական տնօրեն

*«Յուքոմ» ՓԲԸ*
*Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն*
*2023թ. համար*

| հազ. դրամ | Խմբի բաժնետերերին վերագրելի | | | |
|---|---|---|---|---|
| | Բաժնետի-ական կապիտալ | Լրացուցիչ կապիտալ | Կուտակված վնաս | Ընդամենը սեփական կապիտալ |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.** | 23,903 | 35,084,845 | (28,846,001) | 6,262,747 |
| Վնաս և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար | - | - | 4,254,879 | 4,254,879 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **23,903** | **35,084,845** | **(24,591,122)** | **10,517,626** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2023թ. | 23,903 | 35,084,845 | (24,591,122) | 10,517,626 |
| Վնաս և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար | - | - | 5,563,105 | 5,563,105 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **23,903** | **35,084,845** | **(19,028,017)** | **16,080,731** |

| հազ. դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ | 43,520,539 | 40,496,720 |
| Մատակարարներին վճարված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ | (16,053,392) | (16,010,894) |
| Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ՝ ներառյալ հարկերը | (6,763,918) | (6,244,209) |
| Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի | (6,089,980) | (4,641,164) |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | **14,613,249** | **13,600,453** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Ստացված տոկոսներ | 5,694 | 7,909 |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (5,446,411) | (4,069,824) |
| Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից | 7,520 | 664 |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (4,734,506) | (2,041,685) |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | **(10,167,703)** | **(6,102,936)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | |
| Ստացված վարկեր և փոխառություններ (Ծնթ. 19) | 15,580,957 | - |
| Վարկերի և փոխառությունների մարում (Ծնթ. 19) | (14,329,430) | (1,768,090) |
| Թողարկված պարտքային արժեթղթերի մարում (Ծնթ. 18) | - | (2,370,997) |
| Վարձակալության պարտավորությունների գծով վճարումներ (Ծնթ. 12) | (2,540,697) | (2,032,406) |
| Վճարված տոկոսներ | (3,188,843) | (2,513,852) |
| **Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | **(4,478,013)** | **(8,685,345)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում** | **(32,467)** | **(1,187,828)** |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի | 975,206 | 2,221,887 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 10,174 | (58,853) |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի (Ծնթ. 13)** | **952,913** | **975,206** |

## 2023թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ


| Ծանոթագրություն | Էջ |
|---|---|
| **Անկախ սաուդիտորի եզրակացություն** | 4 |
| 1. Հաշվետու կազմակերպություն | 12 |
| 2. Պատրաստման հիմունքներ | 13 |
| 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ | 16 |
| 4. Նշանակալի գնահատումներ, դատողություններ և սխալների ուղղում | 16 |
| 5. Հասույթ | 18 |
| 6. Այլ եկամուտներ | 22 |
| 7. Այլ ծախսեր | 23 |
| 8. Զուտ ֆինանսական ծախսեր | 24 |
| 9. Շահութահարկ | 24 |
| 10. Հիմնական միջոցներ | 25 |
| 11. Ոչ նյութական ակտիվներ | 26 |
| 12. Վարձակալություն | 28 |
| 13. Տրամադրված փոխառություններ | 29 |
| 14. Պաշարներ | 29 |
| 15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 30 |
| 16. Սեփական կապիտալ | 30 |
| 17. Կապիտալի կառավարում | 30 |
| 18. Թողարկված պարտքային արժեթղթեր | 30 |
| 19. Վարկեր և փոխառություններ | 30 |
| 20. Պահուստներ | 33 |
| 21. Պայմանագրի գծով պարտավորություններ | 34 |
| 22. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 34 |
| 23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում | 34 |
| 24. Պայմանական դեպքեր | 43 |
| 25. Կապակցված կողմեր | 44 |
| 26. Դուստր կազմակերպություններ | 46 |
| 27. Չափման հիմունքներ | 46 |
| 28. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր | 47 |
| 29. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ | 62 |

## 1. Հաշվետու կազմակերպություն

### (ա) Հայաստանի բիզնես միջավայրը

Խումբը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, Խումբը ենթարկվում է ՀՀ տնտեսական և ֆինանսական շուկաների փոփոխությունների ազդեցությանը:

Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022 թվականի փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունը ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, գնաճը նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաեւ Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից դրամական միջոցների զգալի հոսքեր կան դեպի ՀՀ: Ուստի, տարածաշրջանում քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը, սուր գնաճը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասաբար անդրադառնալ ՀՀ տնտեսության վրա:

Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է առկա համաշխարհային տուրբուլենտներին և կարողացել է տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ գրանցել ինչպես 2023, այնպես էլ 2022 թվականներին՝ հիմնականում զբոսաշրջության, մի շարք ընկերությունների Հայաստան վերաբաշխման և տրանսֆերտների զգալի աճի շնորհիվ: Նշված բոլոր գործոնները հանգեցրել են ՀՆԱ-ի 8,7% աճին 2023 թվականին: Կառավարության 2021-2026 թվականների տնտեսական ծրագիրը նպատակ ունի զարգացնել արտահանմանն ուղղված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների ջանքերի միջոցով:

Նման գործառնական միջավայրը էական ազդեցություն ունի Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Խումբը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ Խմբի գործունեության կայունությունն ապահովելու համար, սակայն, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից, Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատել նման հանգամանքների ազդեցությունը Խմբի ֆինանսական վիճակի վրա:

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողությունները դժվար է կանխատեսել:

### (բ) Կազմակերպչական կառուցվածքը և գործունեությունը

«Յուքոմ» ՓԲԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն 1994թ. ապրիլին և հանդիսանում է «Մոսկվա» ՍՊԸ-ի ու «Առաքինի ընկեր» ՍՊԸ-ի իրավահաջորդը: Ընկերությունը վերանվանվել է «Յուքոմ» ՍՊԸ-ի 2007թ. դեկտեմբերի 12-ին Ընկերության կանոնադրությունում կատարված փոփոխությունների համաձայն: Ընկերությունն իր գործունեությունը սկսել է 2007թ. հոկտեմբերի 22-ին, մինչև այդ ամսաթիվն այն գործունեություն չէր իրականացնում: 2020թ. հունվարի 15-ին Ընկերությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից վերակազմավորվեց փակ բաժնետիրական ընկերության, ինչպես սահմանված է Հայաստանի Քաղաքացիական օրենսգրքով: «Յուքոմ» ՍՊԸ-ն լիկվիդացվեց և հիմնադրվեց նոր ընկերություն՝ «Յուքոմ» ՓԲԸ-ն, որը «Յուքոմ» ՍՊԸ-ի իրավահաջորդն է:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության իրավաբանական հասցեն էր՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0069, Դավիթ Անհաղթի 8/4:

2015թ. օգոստոսի 31-ին Ընկերությունը ձեռք է բերել հսկողություն «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի նկատմամբ՝ գնելով ընկերության բաժնետոմսերի և քվեարկելու իրավունք տվող բաժնեմասերի 100%-ը: 2016թ. մարտի 31-ին «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ն միաձուլվել է «Յուքոմ» ՓԲԸ-ին իրավական հիմքով:

2017թ. փետրվարին Ընկերությունն իրավական հիմքով միաձուլվել է իր երկու դուստր կազմակերպությունների՝ «Ինտերակտիվ ԹիՎի» ՍՊԸ-ի և «Այքան Քոմունիքեյշնս» ՓԲԸ-ի հետ:

Թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 23,903,447 սովորական բաժնետոմսից: Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 1 դրամ:

Ընկերության հիմնական գործունեությունը բջջային հեռահաղորդակցության, լայնաշերտ և անլար ինտերնետի, թվային հեռուստատեսության և ֆիքսված թվային հեռախոսակապի ծառայությունների մատուցումն է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև տվյալների փոխանցման և հոսթինգի ծառայությունների տրամադրումն է: Ընկերությունը վաճառում է նաև հեռահաղորդակցության սարքավորումներ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

2018թ. հունիսի 7-ին Ընկերությունը հիմնադրել է նոր ընկերություն՝ «Յուփեյ» ՓԲԸ (Դուստր կազմակերպություն): «Յուփեյ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Ընկերությանը:

Դուստր կազմակերպության հիմնական գործունեությունը վճարումների ընդունման ծառայությունների մատուցումն է, մասնավորապես, հաճախորդների կոմունալ ծառայությունների վճարների, վարկերի մարումների, պետական բյուջե վճարումների ընդունումը ծառայություններ մատուցողների անունից և վարկերի տրամադրումը վարկային կազմակերպությունների անունից իր 42 մասնաճյուղերի միջոցով:

Խումբը չունի վերջնական հսկող կողմ: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 25-ում:

## 2. Պատրաստման հիմունքներ

### (ա) Համապատասխանության մասին հավաստում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ հրապարակված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից, և Մեկնաբանությունների համաձայն (միասին՝ ՖՀՄՍ ստանդարտներ):

ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն՝ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 4s-ում:

### (բ) Անընդհատության սկզբունք

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա, որը ենթադրում է, որ Խումբը կկարողանա կատարել իր պարտավորությունները, ներառյալ բանկային միջոցների պարտադիր մարման պայմանները:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ընթացիկ պարտավորությունները 7,625,179 հազար դրամով գերազանցել են ընթացիկ ակտիվները (2022: 11,696,642 հազար դրամ) :

Ղեկավարությունը վստահ է, որ Ընթացիկ ֆինանսական ժամանակաշրջանում Խումբն ունեցել է հասույթի և շուկայի մասնաբաժնի աճ: Ղեկավարությունը վստահ է Խմբի ունակության մեջ՝ շարունակելու իր գործառնական գործունեությունը՝ հիմնվելով վերջին երկու տարիների նրա բարձր ֆինանսական արդյունքներին: Ելնելով այս գործոններից՝ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունը կկարողանա կատարել իր պարտավորությունները և շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում:
Այս գործոնների հիման վրա ղեկավարությունը ողջամիտ ակնկալիք ունի, որ Խումբն ունի և կունենա համապատասխան ռեսուրսներ՝ շարունակելու գործառնական գոյությունը սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Համապատասխանաբար, ղեկավարությունը կարծում է, որ չկա էական անորոշություն՝ կապված Խմբի շարունակական գործունեության ունակության հետ:

**(գ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ**

***2023թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ***

***ՖՀՄՍ 17 Ապահովագրական պայմանագրեր***

2017թ. Մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 17 "Ապահովագրության պայմանագրեր" , համապարփակ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտը, որը նախատեսված է ապահովագրական պայմանագրերի համար: "Ապահովագրության պայմանագրեր" ՖՀՄՍ 17-ը սկզբունքներ է սահմանում սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող ապահովագրության պայմանագրերի ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման համար: ՖՀՄՍ 17-ը կփոխարինի ՖՀՄՍ 4 "Ապահովագրության պայմանագրեր" ստանդարտին, որը թողարկվել է 2005թ.: ՖՀՄՍ 17-ը կիրառելի է ապահովագրական պայմանագրերի բոլոր տեսակներին (ներառյալ՝ կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրություն, ուղղակի ապահովագրություն և վերաապահովագրություն), անկախ ապահովագրություն տրամադրող կազմակերպության տեսակից:

ՖՀՄՍ 17-ը նաև կիրառելի է որոշակի երաշխիքների և հայեցողական մասնակցության հատկանիշներով ֆինանսական գործիքների դեպքում: Կիրառելի են որոշակի բացառություններ:

ՖՀՄՍ 17-ը սահմանում է հաշվապահական հաշվառման նոր պահանջներ ապահովագրական հատկանիշներով բանկային պրոդուկտների նկատմամբ: Այս պահանջները կարող են ազդել, թե որ գործիքները կամ դրանց բաղադրիչները կներառվեն ՖՀՄՍ 9-ի կամ ՖՀՄՍ 17-ի շրջանակներում:

Վարկային քարտեր և համանման ապրանքներ, որոնք ապահովագրական ծածկույթ են ապահովում թողարկողներից շատերը կարող են շարունակել կիրառել առկա հաշվապահական մոտեցումը՝ որպես ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական գործիք:

ՖՀՄՍ 17-ը իր շրջանակից բացառում է վարկային քարտերի պայմանագրերը ( և այլ նմանատիպ պայմանագրերը, որոնք տրամադրում են կրեդիտային կամ վճարային պայմանավորվածություններ), որոնք համապատասխանում են ապահովագրության պայմանագրի սահմանմանը, միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը հաճախորդի հետ պայմանագրի գինը սահմանելիս չի արտացոլում ֆիզիկական անձի հետ կապված ապահովագրական ռիսկի գնահատումը:
Երբ ապահովագրական ծածկույթը տրամադրվում է որպես վարկային քարտի պայմանագրային պայմանների մաս, թողարկողը պարտավոր է՝

- Առանձնացնել ապահովագրության ծածկույթը և դրա նկատմամբ կիրառելի ՖՀՄՍ 17,
- Այլ բաղադրիչների նկատմամբ գործադրել այլ կիրառելի ստանդարտներ (Օրինակ է ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15, Հասույթ գնորդների հետ պայմանագրերից կամ ՀՀՄՍ 37, Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ:

Վարկային պայմանագրերը, որոնք համապատասխանում են ապահովագրության սահմանմանը, բայց ապահովագրական իրադարձությունների փոխհատուցումը սահմանափակում են այն չափով, որն այլապես պահանջվում է ապահովադրի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունը մարելու համար: Այդպիսի վարկերի թողարկողները, օրինակ՝ մահվան հրաժարմամբ վարկերը, ունեն տարբերակ կիրառելու ՖՀՄՍ 9-ը կամ ՖՀՄՍ 17-ը: Ընտրությունը կատարվում է պորտֆելի մակարդակով և համարվում է անփոփոխ:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2023թ.-ի հունվարի 1-ից սկսվող կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ պահանջելով համեմատելի տվյալներ: Վաղ կիրառումը թույլատրելի է այն պայմանով, որ կազմակերպությունը նաև կիրառում է ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 15, ՖՀՄՍ 17 առաջին անգամ կիրառելու ամսաթվից ի վեր կամ դրանից առաջ:

***Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ***

2020 թ. հունվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 1-ի 69-ից 76 պարբերություններում՝ պարտավորությունները որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները հստակեցնելու համար: Փոփոխությունները պարզաբանում են.

- Ինչ է նշանակում մարումը հետաձգելու իրավունք
- Որ հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի ավարտին
- Որ դասակարգման վրա չի ազդում կազմակերպության՝ հետաձգելու իրավունքը օգտագործելու հավանականությունը
- Որ միայն այն դեպքում, երբ փոխարկելի պարտավորության մեջ ներդրված ածանցյալ գործիքն ինքնին հանդիսանում է բաժնային գործիք, ապա պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվի հետադարձ ուժով:

***Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում - Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում***

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

***Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում***

2021թ.-ի փետրվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում (Էականության մասին դատողությունների կիրառում), որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով <նշանակալի> հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը <էական> հաշվապահական

հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Քանի որ Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

***Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)***

2021 թվականի մայիսին Խորհուրդը հրապարակեց ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները, որոնք նեղացնում են ՀՀՄՍ 12-ի համաձայն նախնական ճանաչման բացառման շրջանակը, այն այլևս չի կիրառվում այն գործարքների մասով, որոնք հանգեցնում են հավասարապես հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների: Փոփոխությունները պետք է կիրառվեն այն գործարքների համար, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: Ինչպես նաև, ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում պետք է ճանաչվեն նաև հետաձգված հարկային ակտիվը (եթե առկա է բավարար հարկվող շահույթ) և հետաձգված հարկային պարտավորությունը վարձակալության և ապագործարկման պարտավորությունների հետ կապված բոլոր նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Այս փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դրամը Խմբի ֆունկցիոնալ և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

## 4. Նշանակալի գնահատումներ, դատողություններ և սխալների ուղղում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա և այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված են հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 2 (բ) - ենթադրություններ, որոնք վերաբերում են Խմբի՝ իր գործունեությունն անընդհատ շարունակելու կարողությանը,
- Ծանոթագրություն 5 - օգտագործման անքակտելի իրավունքի (ՕԱԻ) պայմանագրերի գծով ստացված կանխավճարների նշանակալի ֆինանսավորման բաղադրիչի որոշում, դադարեցված պայմանագրերի գծով հասույթի հավաքագրման հնարավորության որոշում,
- Ծանոթագրություն 12 - վարձակալության ժամկետի և վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի որոշում,
- Ծանոթագրություն 27 (ը) (iii) - հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ,
- Ծանոթագրություն 11 - ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկումը ստուգելիս կատարվող հիմնական ենթադրություններ,
- Ծանոթագրություն 20 - ապամոնտաժման գծով պահուստի գնահատման ժամանակ կատարվող հիմնական ենթադրություններ,
- Ծանոթագրություն 23(գ) - առևտրական դեբիտորական պարտքերից և պայմանագրի գծով ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով պահուստի չափում. վնասի միջին կշռված դրույքը որոշելու համար կիրառվող հիմնական ենթադրություններ,
- Ծանոթագրություն 9 - հետաձգված հարկային ակտիվների չճանաչում,
- Ծանոթագրություն 11 - ռադիոհաճախականության օգտագործման համար վճարվելիք կանխավճարների սահմանաում որպես անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվներ:

**Իրական արժեքի չափում**

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության որոշակի դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև.

- 1-ին մակարդակ. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտվող):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումները Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

## 5. Հասույթ

### (ա) Հասույթի ուղղություններ

| հազ. դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | | |
| Ֆիքսված լայնաշերտ ինտերնետ | 12,278,227 | 10,932,935 |
| Բջջային ծառայություններ (ներառյալ բջջային ինտերնետ) | 11,713,110 | 10,323,497 |
| Ապրանքների վաճառք | 3,976,586 | 3,975,969 |
| Թվային հեռուստատեսություն | 3,341,835 | 3,679,879 |
| Շարժական լայնաշերտ ինտերնետ | 2,478,160 | 2,651,604 |
| Փոխկապակցում և ռոումինգ | 2,281,149 | 2,143,300 |
| IRU, IP և տվյալների փոխանցում | 1,534,922 | 1,976,682 |
| Քաղաքային թվային հեռախոսակապ և փոխկապակցում | 294,967 | 313,624 |
| Համակարգերի ներդրում | 205,057 | - |
| Ցանցի կառուցման աշխատանքներ | 79,998 | 97,340 |
| Այլ | 124,087 | 136,199 |
| **Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **38,308,098** | **36,231,029** |
| **Այլ հասույթ** | | |
| Հեռահաղորդակցության սարքավորումների վարձակալություն | - | 23,143 |
| **Ընդամենը հասույթ** | **38,308,098** | **36,254,172** |

### (բ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների և հասույթի ճանաչման ժամկետների.

| հազ. դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Հիմնական աշխարհագրական շուկաներ** | | |
| Հայաստանի Հանրապետություն | 35,958,609 | 33,544,475 |
| Մերձավոր Արևելքի երկրներ | 1,163,580 | 1,662,157 |
| Եվրոյի գոտու երկրներ | 690,421 | 538,713 |
| Այլ ԱՊՀ երկրներ | 379,250 | 377,143 |
| Այլ երկրներ | 116,238 | 108,541 |
| | **38,308,098** | **36,231,029** |
| **Հասույթի ճանաչման ժամկետներ** | | |
| Ժամանակի որոշակի պահին | 3,976,586 | 3,975,969 |
| Ժամանակի ընթացքում | 34,331,512 | 32,255,060 |
| **Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **38,308,098** | **36,231,029** |
| Այլ հասույթ | - | 23,143 |
| **Ընդամենը հասույթ** | **38,308,098** | **36,254,172** |

### (գ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի, պայմանագրի գծով ակտիվների և պայմանագրի գծով պարտավորությունների վերաբերյալ.

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|---|---|---|
| Առևտրական դեբիտորական պարտքեր | 6,310,421 | 6,941,406 |
| Պայմանագրի գծով ակտիվներ | - | 158,005 |
| Պայմանագրի գծով պարտավորություններ | 7,906,745 | 8,344,509 |

Պայմանագրի գծով ակտիվները հիմնականում վերաբերում են այն աշխատանքի դիմաց հատուցում ստանալու Խմբի իրավունքներին, որի իրականացումն ավարտվել է, սակայն որի համար դեռ հաշիվ չի ներկայացվել հաշվետու ամսաթվի դրությամբ, ինչպես նաև պայմանագրի կնքման հետ կապված լրացուցիչ ծախսումներին, այդ թվում՝ վաճառքի գործակալի միջնորդավճարին: Պայմանագրի գծով ակտիվները, որոնք վերաբերում են ավարտված աշխատանքին, սակայն որի համար հաշիվ դեռ չի ներկայացվել, փոխանցվում են դեբիտորական պարտքերի կազմ, երբ իրավունքները դառնում են ոչ պայմանական: Պայմանագրի գծով ակտիվները, որոնք վերաբերում են պայմանագրի կնքման հետ կապված լրացուցիչ ծախսումներին, ամորտիզացվում են համապատասխան հասույթի ճանաչման ժամկետի ընթացքում:

Խումբը գնահատում է դադարեցված (պարտազանցված) պայմանագրերի հետ կապված տուգանքներից հասույթի և այլ եկամտի հավաքագրման հնարավորությունը հասույթի ճանաչման պահին: Հիմք ընդունելով նման հասույթի 30%-ից պակաս չափով հավաքագրումների անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունը՝ Խումբը գնահատել է, որ հասույթ չպետք է ճանաչվի դադարեցված պայմանագրերի գծով՝ հաշվի առնելով հավաքագրման քիչ հավանականությունը:

Պայմանագրի գծով պարտավորությունները ներառում են ՕԱԻ պայմանագրերի գծով ստացված կանխավճարները, ցանցի տեղադրման ծառայությունների վճարները և այլ հետաձգված հասույթը: ՕԱԻ պայմանագրերի գծով ստացված կանխավճարները վերաբերում են Խմբի ենթակառուցվածքի որոշ մուտ մանրաթելերին մուտքի իրավունք տրամադրելու համար հաճախորդներից որպես կանխավճար ստացված հատուցմանը:

952,834 հազար դրամ գումարը, որը ճանաչվել է պայմանագրի գծով պարտավորությունների կազմում ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, ճանաչվել է որպես հասույթ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար (2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար՝ 824,283 հազար դրամ):
Ակնկալվում է, որ պայմանագրի գծով պարտավորությունների կազմում ներառված ՕԱԻ պայմանագրերի շրջանակում մնացած կատարման պարտականությունները կճանաչվեն ապագա ժամանակաշրջանների հասույթի կազմում հետևյալ կերպ.

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|---|---|---|
| Մինչև 1 տարի | 475,773 | 444,435 |
| 1-ից 2 տարի | 517,592 | 464,409 |
| 2-ից 5 տարի | 2,209,285 | 1,859,854 |
| Ավելի քան 5 տարի | 4,239,039 | 5,125,412 |
| | **7,441,689** | **7,894,110** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի բացահայտվել տեղեկատվություն մնացած կատարման պարտականությունների վերաբերյալ, որոնց սկզբնական ակնկալվող տևողությունը կազմում է մեկ տարի կամ պակաս, ինչպես թույլատրվում է ՖՀՄՍ 15-ով:

## (դ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրով սահմանված հատուցման հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

| Ապրանքի/ ծառայության տեսակը | Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները | Հասույթի ճանաչման քաղաքականություն |
|---|---|---|
| **Փոխկապակցման ծառայություններ** | Փոխկապակցման ծառայություններից օգտվելու վճարները գանձվում են հեռահաղորդակցության այլ օպերատորներից Խմբի ցանցում առաջացած տրաֆիկի համար այն պայմանագրերի շրջանակում, որոնք նաև կարգավորում են այլ օպերատորների ցանցերի օգտագործումը Խմբի կողմից:<br>Փոխկապակցման ծառայությունների համար հաշիվները դուրս են գրվում և վճարվում են ամսական կտրվածքով; | Փոխկապակցման ծառայությունների վճարներից ստացվող հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցմանը զուգահեռ: |
| **Ֆիքսված ծառայություններ (ինտերնետ, հեռուստատեսությունը և IP հեռախոսակապ)** | Խումբը հասույթ է ստանում յուրաքանչյուր բաժանորդից ֆիքսված ծառայությունների համար: Կատարման պարտականությունը համարվում է կատարված ծառայությունների մատուցումից հետո: Ծառայությունը հետվճարային է: | Ֆիքսված կապի ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող ամսական ֆիքսված վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում ծառայությունների մատուցմանը զուգահեռ՝ անցած ժամանակահատվածը կիրառելով որպես կատարման առաջընթացի չափման միավոր: |
| **Բջջային և ինտերնետ ծառայություններ (բջջային հեռախոսակապ, տվյալներ, ռոումինգ, հաղորդագրություններ, ինտերնետ)** | Խումբը հասույթ է ստանում յուրաքանչյուր բաժանորդից բջջային և ինտերնետ ծառայությունների համար: Կատարման պարտականությունը համարվում է կատարված ծառայությունների մատուցումից հետո՝ հիմք ընդունելով օգտագործված րոպեները, մշակված հաղորդագրությունների քանակը և օգտագործված տվյալների ծավալը: Ծառայության համար գործում է թե՛ կանխավճարային և թե՛ հետվճարային տարբերակ: | Բջջային և ինտերնետ ծառայություններից ստացվող հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցմանը զուգահեռ: Առաջընթացի չափման միավորը հիմնված է օգտագործված րոպեների, մշակված հաղորդագրությունների քանակի և օգտագործված տվյալների ծավալի վրա:<br>Միավորված փաթեթների համար Խումբն առանձին ծառայությունները հաշվառվում է առանձին հիմունքով, եթե այդ ծառայությունները տարբերակելի են, այսինքն կարող են առանձին որոշակիացվել միավորված |

| Ապրանքի/ ծառայության տեսակը | Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները | Հասույթի ճանաչման քաղաքականություն |
|---|---|---|
| | | փաթեթի մյուս ծառայություններից, և եթե բաժանորդը կարող է օգուտ ստանալ այդ ծառայությունից: Հատուցումը բաշխվում է փաթեթի առանձին ծառայությունների միջև՝ հիմք ընդունելով առանձին վաճառքի գները:<br><br>Ամսական բաժանորդագրության վճարը ճանաչվում է որպես հասույթ այն ամսում, որի ընթացքում ծառայությունը մատուցվում է բաժանորդին: Քանի որ միավորված փաթեթների դեպքում չօգտագործված մեգաբայթերը, հաղորդագրությունները և րոպեները չեն կարող փոխանցվել հաջորդ ժամանակաշրջան, հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ անցած ժամանակահատվածը կիրառելով որպես առաջընթացի չափման միավոր: Խումբը սկսում է ճանաչել հասույթը փաթեթի ակտիվացման պահից մինչև ծառայության գործողության ժամկետի ավարտը: Այս ծառայությունների համար հաշիվները դուրս են գրվում և վճարվում են ամսական կտրվածքով: |
| **ՕԱԻ, IP և տվյալների փոխանցում** | Խումբը հասույթ է ստանում իր մալուխային ցանցից օգտվելու համար կատարվող ֆիքսված վճարներից: Կատարման պարտականությունը համարվում է կատարված ծառայությունների մատուցումից հետո: Ծառայությունը կանխավճարային է: | Խումբն ունի որոշ երկարաժամկետ ՕԱԻ պայմանագրեր, որոնց շրջանակում ցանցի սպասարկման պարտականությունը և դրա հետ կապված վերադարձի ռիսկը Խմբի կողմից պահվում են պայմանագրի գործողության ընթացքում:<br><br>Խումբը ճշգրտում է գործարքի գինը նշանակալի ֆինանսավորման բաղադրիչի մասով և ճանաչում է համապատասխան տոկոսային ծախսը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում:<br><br>Խումբը հասույթը ճանաչում է գծային մեթոդով՝ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում: |

| Ապրանքի/ ծառայության տեսակը | Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները | Հասույթի ճանաչման քաղաքականություն |
|---|---|---|
| **Ապրանքների վաճառք** | Հաճախորդը իսկողության իրավունք է ստանում վաճառված ապրանքների նկատմամբ, որոնք հիմնականում իրենցից ներկայացնում են հեռահաղորդակցության սարքավորումներ և բջջային հեռախոսներ, Խմբի հաճախորդների սպասարկման կենտրոնում: Հաշիվները դուրս են գրվում և հասույթը ճանաչվում է ժամանակի այդ պահին: Իրավաբանական անձանց հաշիվները ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում: Ֆիզիկական անձանց հաշիվները ենթակա են վճարման կանխիկով՝ հաշիվը դուրս գրելուց անմիջապես հետո, իսկ ապառիկ վաճառքի դեպքում վաճառված ապրանքի համար վճարում է կատարում պայմանագրային բանկը 30 օրվա ընթացքում: Վաճառված ապրանքի համար բոնուսային միավորներ կամ վերադարձման հնարավորություն չեն առաջարկվում: | Հասույթը ճանաչվում է, երբ ապրանքը փոխանցվում է հաճախորդին Խմբի հաճախորդների սպասարկման կենտրոնում և դուրս է գրվում հաշիվը:<br><br>Միավորված փաթեթների համար Խումբը վաճառված առանձին ապրանքները հաշվառվում է առանձին հիմունքով, եթե այդ ապրանքները հստակ տարբերակելի են, այսինքն կարող են առանձին որոշակիացվել միավորված փաթեթի մյուս ապրանքներից, և եթե հաճախորդը կարող է օգուտ ստանալ այդ ապրանքից: Հատուցումը բաշխվում է փաթեթի սակագնային պլանի շրջանակում վաճառված ապրանքների և մատուցված ծառայությունների միջև՝ հիմք ընդունելով առանձին վաճառքի գները: |

## 6. Այլ եկամուտներ

| հազ. դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Վարկի մարումներից հրաժարում (Ծանոթագրություն 19) | 4,356,835 | - |
| Եկամուտ ոչ հիմնական ծառայություններից | 306,366 | 61,478 |
| Վարձակալության գծով պայմանագրերի փոփոխումից ստացված զուտ եկամուտ | 262,154 | 218,485 |
| Վնասի փոխհատուցում | 191,321 | 68,678 |
| Պաշարների վերականգնում պաշարների հաշվառման արդյունքում | 101,446 | 569,365 |
| Այլ | 121,033 | 164,854 |
| | **5,339,155** | **1,082,860** |

## 7. Այլ ծախսեր

| հազ. դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Վաճառված սարքավորումների ինքնարժեք | 3,627,302 | 3,564,756 |
| Փոխկապակցման ծառայությունների և ռոումինգի գծով ծախսեր | 2,606,261 | 3,134,184 |
| Տեխնիկական աջակցություն և սպասարկում | 1,462,393 | 1,560,773 |
| Գրասենյակի սպասարկում, էլեկտրաէներգիա և կոմունալ ծախսեր | 1,389,989 | 1,380,464 |
| Հեռուստաալիքների գնում | 1,141,817 | 1,169,693 |
| Ինտերնետի գնում | 806,885 | 841,292 |
| Միջնորդավճարների գծով ծախսեր | 688,912 | 559,698 |
| Շահագործման և սպասարկման վճարներ ՕԱԻ պայմանագրերի գծով | 505,337 | 671,963 |
| Գովազդ, շուկայավարում և իրացում | 489,130 | 441,926 |
| Մասնագիտական ծառայություններ | 396,058 | 129,126 |
| Գրասենյակային և տրանսպորտային ծախսեր | 379,003 | 352,583 |
| Այլ գործառնական վարձակալության ծախսեր | 162,916 | 174,718 |
| Չփոխհատուցվող հարկերից ծախսեր | 103,905 | 124,767 |
| Այլ | 1,698,969 | 1,699,937 |
| | **15,458,877** | 15,805,880 |

## 8. Զուտ ֆինանսական ծախսեր

| հազ. դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Շահույթում կամ վնասում ճանաչված** | | |
| Տոկոսային եկամուտ | 5,878 | 9,187 |
| **Ֆինանսական եկամուտ** | **5,878** | **9,187** |
| Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների և պարտքային արժեթղթերի գծով | (2,984,629) | (3,360,525) |
| Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորության ամորտիզացիայի գծով | (1,132,874) | (1,849,131) |
| Տոկոսային ծախս ՕԱԻ պայմանագրերի հետ կապված պայմանագրի գծով պարտավորությունների մասով | (500,950) | (479,777) |
| Ռադիոհաճախականության օգտագործման համար վճարվելիք վճարների գծով զեղչի ծախսագրում | (252,737) | (264,111) |
| Տեղանքի վերականգնման պահուստի գծով զեղչի ծախսագրում | (128,727) | (121,858) |
| Սարքավորումների ձեռքբերման գծով հետաձգված կրեդիտորական պարտքերի գծով զեղչի ծախսագրում | - | (3,073) |
| **Ֆինանսական ծախսեր** | **(4,999,917)** | **(6,078,475)** |
| Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից | (1,307,942) | 9,048,207 |
| **Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական (ծախս)/եկամուտ** | **(6,301,981)** | **2,978,919** |

## 9. Շահութահարկ

### ա/ Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառելի 18% դրույքաչափով (2022թ-ին՝ 18%):

| հազ. դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Հետաձգված հարկի գծով ծախս** | | |
| Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | - | - |
| **Շահութահարկի գծով ծախս** | - | - |

## 10. Հիմնական միջոցներ

| հազ. դրամ | Հող և շենքեր | Ցանցային ենթակառուցվածք | Սարքավո-րումներ | Փոխադրա-միջոցներ | Կահույք և հարմարանքներ | Վարձակալված հիմնական միջոցների բարելավումներ | Անավարտ շինարա-րություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | 1,213,718 | 40,054,017 | 34,640,876 | 551,887 | 1,472,236 | 558,467 | 548,702 | 79,039,903 |
| Ավելացումներ | 16,302 | 426,804 | 2,682,641 | 8,510 | 176,459 | 100,568 | 20,010 | 3,431,294 |
| Փոխանցումներ | 62,341 | 69,523 | (77,096) | 153 | 58,059 | 10,696 | (123,676) | - |
| Օտարումներ | - | (68,143) | (477,029) | - | (16,067) | (7,974) | (15,728) | (584,941) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **1,292,361** | **40,482,201** | **36,769,392** | **560,550** | **1,690,687** | **661,757** | **429,308** | **81,886,256** |
| Մնացորդը առ 1 հունվարի **2023թ.** | **1,292,361** | **40,482,201** | **36,769,392** | **560,550** | **1,690,687** | **661,757** | **429,308** | **81,886,256** |
| Ավելացումներ | 3,615 | 1,878,378 | 2,359,812 | 114,241 | 126,869 | 66,178 | 103,860 | 4,652,953 |
| Փոխանցումներ | 91,940 | 214,346 | 5,090 | - | - | 13,717 | (325,093) | - |
| Օտարումներ | - | (1,586) | (745,335) | (205) | (51,534) | - | (4,945) | (803,605) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **1,387,916** | **42,573,339** | **38,388,959** | **674,586** | **1,766,022** | **741,652** | **203,130** | **85,735,604** |
| *Մաշվածություն* | | | | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.** | **178,372** | **15,005,870** | **25,478,707** | **535,024** | **1,144,523** | **166,651** | **-** | **42,509,147** |
| Տարվա մաշվածություն | 26,344 | 2,561,889 | 1,978,456 | 14,219 | 138,431 | 45,648 | - | 4,764,987 |
| Փոխանցումներ | 1,553 | (63,503) | (95,665) | - | 156,062 | 1,553 | - | - |
| Օտարումներ | - | (570) | (205,924) | - | (14,412) | - | - | (220,906) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **206,269** | **17,503,686** | **27,155,574** | **549,243** | **1,424,604** | **213,852** | **-** | **47,053,228** |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.** | **206,269** | **17,503,686** | **27,155,574** | **549,243** | **1,424,604** | **213,852** | **-** | **47,053,228** |
| Տարվա մաշվածություն | 31,526 | 2,269,779 | 2,201,410 | 25,293 | 93,359 | 32,836 | - | 4,654,203 |
| Փոխանցումներ | (10,567) | 6,431 | 73,983 | (186) | (36,470) | (33,191) | - | - |
| Օտարումներ | - | (363) | (486,866) | (205) | (50,295) | - | - | (537,729) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **227,228** | **19,779,533** | **28,944,101** | **574,145** | **1,431,198** | **213,497** | **-** | **51,169,702** |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | | | | |
| Առ 1 հունվարի 2022թ. | 1,035,346 | 25,048,147 | 9,162,169 | 16,863 | 327,713 | 391,816 | 548,702 | 36,530,756 |
| Առ 31 դեկտեմբերի 2022թ. | 1,086,092 | 22,978,515 | 9,613,818 | 11,307 | 266,083 | 447,905 | 429,308 | 34,833,028 |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **1,160,688** | **22,793,806** | **9,444,858** | **100,441** | **334,824** | **528,155** | **203,130** | **34,565,902** |

**ա/ Ապահովություն**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 7,723,567 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2022թ-ին՝ 8,476,410 հազար դրամ) գույքը գրավադրված է բանկային վարկերի դիմաց (տես Ծանոթագրություն 19):

## 11. Ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Հաճախորդների բազա | Լիցենզիաներ և ապրանքային նշաններ | Տարողության ՕԱԻ | Բիլինգային համակարգ և այլ ծրագրեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | 165,170 | 41,555,567 | 15,532,597 | 7,519,165 | 64,772,499 |
| Ավելացումներ | | 174,197 | - | 790,056 | 964,253 |
| Օտարումներ | - | (607,060) | (459,814) | (154,048) | (1,220,922) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **165,170** | **41,122,704** | **15,072,783** | **8,155,173** | **64,515,830** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2023թ. | 165,170 | 41,122,704 | 15,072,783 | 8,155,173 | 64,515,830 |
| Ավելացումներ | - | 29,666,218 | - | 314,984 | 29,981,202 |
| Օտարումներ | - | (131,897) | - | - | (131,897) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **165,170** | **70,657,025** | **15,072,783** | **8,470,157** | **94,365,135** |
| ***Ամորտիզացիա և արժեզրկումից կորուստներ*** | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | 165,170 | 15,868,776 | 5,848,376 | 5,130,295 | 27,012,617 |
| Արժեզրկում | - | 3,558,787 | 991,378 | 627,895 | 5,178,060 |
| Տարվա ամորտիզացիա | - | 2,164,266 | - | - | 2,164,266 |
| Օտարումներ | - | (607,060) | (459,814) | (154,048) | (1,220,922) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **165,170** | **20,984,769** | **6,379,940** | **5,604,142** | **33,134,021** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2023թ. | 165,170 | 20,984,769 | 6,379,940 | 5,604,142 | 33,134,021 |
| Տարվա ամորտիզացիա | - | 3,505,347 | 991,378 | 471,372 | 4,968,097 |
| Արժեզրկման վերականգնում | - | (2,306,000) | - | - | (2,306,000) |
| Օտարումներ | - | (131,896) | - | - | (131,896) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **165,170** | **22,052,220** | **7,371,318** | **6,075,514** | **35,664,222** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | - | **25,686,791** | **9,684,221** | **2,388,870** | **37,759,882** |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ. | - | **20,137,935** | **8,692,843** | **2,551,031** | **31,381,809** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | - | **48,604,805** | **7,701,465** | **2,394,643** | **58,700,913** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Յուքոմ» ՓԲԸ-ն ունի ռադիոհաճախականության օգտագործման լիցենզիաներ (Թույլտվություններ) բջջային և ֆիքսված կապի ծառայություններ մատուցելու համար: Թույլտվությունները տրամադրվել են Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի կողմից և թույլ են տալիս Խմբին մատուցել բջջային հեռախոսակապի ծառայություններ: Թույլտվությունների գործողության ժամկետը ավարտվել է 2023թ. նոյեմբերին: Խմբի ղեկավարությունը երկարաձգել է թույլտվությունների ժամկետը մինչև 2038թ. ը: Խումբը վճարում է տարեկան վճար ռադիոհաճախականության օգտագործման համար: Վճարման ենթակա տարեկան վճարները ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվ՝ ներկա արժեքով:

**Արժեզրկման թեսթ**

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը շարունակել է կատարել կապիտալ ծախսումներ ցանցի որակի բարելավման հետ կապված: Խմբի հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները գնահատվել են արժեզրկման տեսանկյունից 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը հիմնված է վերջինիս օգտագործման արժեքի վրա, որը որոշվել է զեղչելով Խմբի շարունակվող գործառնություններից առաջացող ապագա դրամական հոսքերը: Դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի բարձր է վերջինիս հաշվեկշռային արժեքից, և արժեզրկումից կորուստ չի ճանաչվել:

**Զեղչված դրամական հոսքերի կանխատեսումների համար կիրառվող հիմնական ենթադրություններ**

Փոխհատուցվող գումարները հաշվարկելու համար կիրառվող հիմնական ենթադրություններն են՝ զեղչման դրույքը, վերջնական արժեքի աճի տեմպը և EBITDA-ի մարժան: Այդ ենթադրությունները ներկայացված են ստորև:

***(i) Զեղչման դրույք***

Դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշելու համար կիրառվել է 15.84% զեղչման անվանական դրույք նախքան հարկումը: Զեղչման դրույքը որոշվել է հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների փորձը և տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը, որը հիմնված է պարտքի լծակավորման 41.7% հնարավոր տիրույթի վրա՝ 12% շուկայական տոկոսադրույքով:

**Վերջնական արժեքի աճի տեմպ**

Դրամական հոսքերը կանխատեսվել են հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների փորձը, գործառնական գործունեության փաստացի արդյունքները և հնգամյա բիզնես ծրագիրը: Կիրառվել է երկարաժամկետ աճի տեմպ (0%)՝ հաշվի առնելով, որ առանց հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացման և արդիականացման, Ընկերության աճն ապագայում հնարավոր չի լինի:

***(ii) Բյուջեով նախատեսված EBITDA-ի մարժան***

Բյուջեով նախատեսված EBITDA-ն գնահատվում է հիմք ընդունելով ներկա գործառնությունների հետ կապված անցյալ ժամանակաշրջանների փորձը՝ հետևյալ ճշգրտումով.

Խումբը կանխատեսում էր հասույթի աճ վաճառքի գնահատված ծավալից և գների աճից: Արդյունքում կանխատեսվում էր EBITDA մարժայի աստիճանական անկում 52.4%-ից մինչև 50.6% 2025-2028թթ.-ի համար:

**Զգայնությունը ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ**

Կապիտալի միջին կշռված արժեքի աճը 5.9%-ով, վաճառքից ստացված հասույթի նվազումը 10%-ով կամ EBITDA-ի մարժայի նվազումը 20% տոկոսային կետով կհանգեցներ արժեզրկման ճանաչմանը:

## 12. Վարձակալություն

### (ա) Խումբը՝ որպես վարձակալ

Խումբը վարձակալում է LTE ցանցի ենթակառուցվածքի համար օգտագործվող մի շարք տարածքներ, գրասենյակներ/սերվերների համար նախատեսված տարածքներ, հաճախորդներին սպասարկող խանութներ, ինչպես նաև որոշ մուտ օպտիկական մանրաթելի ալիքներ.

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Խումբը հանդես է գալիս որպես վարձակալ.

***Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ***

| հազ. դրամ | Տարածքներ հեռահաղորդակցության աշտարակների տեղադրման համար | Տանիքների տարածք ալեհավաքների տեղադրման համար | Տեղադրված սյուներ | Այլ պորտֆելներ | Հիմնական գրասենյակ | Խանութներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.** | 991,932 | 2,169,333 | 950,978 | 73,280 | 403,674 | 108,523 | 4,697,720 |
| Ավելացումներ | 456,259 | 634,652 | 753,353 | 306,581 | - | 628,087 | 2,778,932 |
| Փոփոխություններ | 163,799 | 710,050 | (100,949) | (4,742) | (22,445) | 1,948,746 | 2,694,459 |
| Տարվա մաշվածության գումար | (119,913) | (370,410) | (160,706) | (353,831) | (169,435) | (346,875) | (1,521,170) |
| Օտարումներ | (193,741) | (263,104) | (271,402) | - | - | (19,860) | (748,107) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **1,298,336** | **2,880,521** | **1,171,274** | **21,288** | **211,794** | **2,318,621** | **7,901,834** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2023թ. | **1,298,336** | **2,880,521** | **1,171,274** | **21,288** | **211,794** | **2,318,621** | **7,901,834** |
| Ավելացումներ | 263,464 | 323,213 | 217,969 | 285,650 | - | 372,732 | 1,463,028 |
| Փոփոխություններ | (607,620) | - | - | - | - | - | (607,620) |
| Տարվա մաշվածության գումար | (118,555) | (466,406) | (174,794) | (290,209) | (169,435) | (379,625) | (1,599,024) |
| Օտարումներ | (59,046) | (138,387) | (56,268) | - | - | - | (253,701) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **776,579** | **2,598,941** | **1,158,181** | **16,729** | **42,359** | **2,311,728** | **6,904,517** |

Գրասենյակների/խանութների տարածքների վարձակալության ժամկետը որպես կանոն կազմում է 5-ից 10 տարի, ցանցի տարածքի վարձակալության ժամկետը՝ 5-ից 10 տարի, իսկ մուտ մանրաթելի վարձակալության ժամկետը՝ 10 տարի:

## Վարձակալության գծով պարտավորություն

| հազ. դրամ | Տարածքներ հեռահաղորդակցության աշտարակների տեղադրման համար | Տանիքների տարածք ալեհավաքների տեղադրման համար | Տեղադրված սյուներ | Այլ պորտֆելներ | Հիմնական գրասենյակ | Խանութներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.** | **1,149,227** | **2,368,462** | **1,280,798** | **175,760** | **446,842** | **217,233** | **5,638,322** |
| Ավելացումներ | 148,021 | 634,652 | 753,353 | 306,581 | - | 628,088 | 2,470,695 |
| Վարձակալության փոփոխություններ | 163,799 | 710,050 | (100,949) | (4,742) | (29,230) | 1,955,530 | 2,694,458 |
| Տոկոսային ծախս | 225,993 | 534,649 | 498,754 | 21,279 | 35,183 | 533,273 | 1,849,131 |
| Վարձավճար | (222,973) | (561,421) | (112,724) | (369,776) | (195,521) | (569,991) | (2,032,406) |
| Վարձակալության գծով պարտավորության դուրսգրում | (234,096) | (377,633) | (332,111) | (222) | - | (22,530) | (966,592) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **1,229,971** | **3,308,759** | **1,987,121** | **128,880** | **257,274** | **2,741,603** | **9,653,608** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2023թ. | **1,229,971** | **3,308,759** | **1,987,121** | **128,880** | **257,274** | **2,741,603** | **9,653,608** |
| Ավելացումներ | 62,143 | 323,213 | 217,969 | 285,650 | - | 372,732 | 1,261,707 |
| Վարձակալության փոփոխություններ | - | - | - | - | (32,758) | - | (32,758) |
| Տոկոսային ծախս | 147,217 | 432,590 | 217,489 | 45,395 | 16,094 | 274,089 | 1,132,874 |
| Վարձավճար | (225,434) | (631,899) | (509,481) | (314,753) | (217,801) | (641,329) | (2,540,697) |
| Վարձակալության գծով պարտավորության դուրսգրում | (75,795) | (343,649) | (68,723) | 10,403 | - | - | (477,764) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **1,138,102** | **3,089,014** | **1,844,375** | **155,575** | **22,809** | **2,747,095** | **8,996,970** |

## 13. Տրամադրված փոխառություններ

Ընկերությունը ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպությանը տրամադրել է փոխառություն, ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 25՝ Կապակցված կողմեր: Ստորև ներկայացված են տրամադրված փոխառությունների նշանակալի պայմանները.

| հազ. դրամ | Արժույթ | Արդյունավետ տոկոսադրույք | Մարման ժամկետ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|---|---|---|
| Փոխառություն կապակցված կողմին | դրամ | 12% | 2025 | 1,037,739 | 1,037,739 |
| Փոխառություն կապակցված կողմին | եվրո | 6% | 2025 | 339,154 | 339,154 |
| Ընդամենը | | | | **1,376,893** | **1,376,893** |

## 14. Պաշարներ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|---|---|---|
| Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ | 997,985 | 920,500 |
| Նյութեր և պահեստամասեր | 615,907 | 682,538 |
| | **1,613,892** | **1,603,038** |

## 15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|---|---|---|
| Կանխիկը դրամարկղում | 67,564 | 69,329 |
| Կանխիկը ճանապարհին | 98,281 | 129,363 |
| Բանկային մնացորդներ | 787,068 | 776,514 |
| **Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **952,913** | **975,206** |

Տոկոսադրույքի ռիսկին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

## 16. Սեփական կապիտալ

### ա/ Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

### բ/ Շահաբաժիններ

2023թ. և 2022թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել: 2023թ. դեկտեմբերի 31-ից հետո մինչև այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը շահաբաժիններ չեն առաջարկվել:

## 17. Կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Խմբի գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Ներկայումս Խումբը մշակում է իր սեփական կապիտալի բացասական մեծության կառավարման ծրագիր:
Խմբի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների պահանջներ:

## 18. Թողարկված պարտքային արժեթղթեր

2019թ. մայիսին Խումբը թողարկել է ԱՄՆ դոլարով պարտատոմսեր՝ 50,000 ընդհանուր քանակով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով և տարեկան 7.5% եկամտաբերությամբ և ՀՀ դրամով պարտատոմսեր՝ 2,500 ընդհանուր քանակով, 100,000 դրամ անվանական արժեքով և 11% տարեկան եկամտաբերությամբ: Պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում: Պարտատոմսերը մարվել են 2022 թվականին: 2023թ. -ի ընթացքում պարտատոմսեր չեն թողարկվել:

## 19. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խմբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|---|---|---|
| ***Ոչ ընթացիկ պարտավորություններ*** | | |
| Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր | 21,223,875 | 19,386,492 |
| Գրավով ապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից | 7,736,594 | 11,541,385 |
| Գրավով չապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից | 5,462,641 | 5,156,975 |
| Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերերից | 2,462,196 | 2,393,949 |
| | **36,885,306** | **38,478,801** |
| ***Ընթացիկ պարտավորություններ*** | | |
| Գրավով չապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից | 1,170,754 | 800,361 |
| Գրավով չապահովված բանկային վարկեր և վարկային գծեր | 697,661 | - |
| Գրավով ապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից | 625,568 | 46,407 |
| Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր | 610,265 | 2,671,410 |
| Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերերից | 426,343 | 299,273 |
| Գրավով չապահովված բանկային վարկ բաժնետիրոջից | 403,858 | 394,476 |
| | **3,934,449** | **4,211,927** |

Խմբի գրավով ապահովված բանկային վարկերի դիմաց գրավադրված են հիմնական միջոցները (Ծանոթագրություն 10), «Յուքոմ» ՓԲԸ-ի բաժնետոմսերը և բանկային հաշիվների շրջանառությունը:

**ա/ Պայմանները և մարման ժամանակացույցը**

Չմարված վարկերի համար գործող պայմանները և մարման ժամկետները ներկայացված են ստորև.

| հազ. դրամ | Արժույթ | Անվանակ. տոկոսադր. | Մարման տարի* | 31 դեկտեմբերի 2023թ. Անվանակ. արժեք | 31 դեկտեմբերի 2023թ. Հաշվեկշռ. արժեք | 31 դեկտեմբերի 2022թ. Անվանակ. արժեք | 31 դեկտեմբերի 2022թ. Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գրավով ապահովված վարկային գիծ | USD | 6m. Libor+7% | 2027 | 697,660 | 697,660 | 11,190,447 | 11,190,447 |
| Գրավով ապահովված վարկային գիծ | EUR | 6m. Euribor +4% | 2023 | - | - | 3,465,624 | 3,465,624 |
| Գրավով ապահովված բանկային վարկ | USD | 8.50% | 2028 | 1,216,106 | 1,216,106 | 1,182,960 | 1,182,960 |
| Գրավով ապահովված բանկային վարկ | USD | 10.00% | 2024 | 403,858 | 403,858 | 394,476 | 394,476 |
| Գրավով ապահովված բանկային վարկ | USD | 8.75% | 2028 | 5,620,370 | 5,620,370 | 5,463,240 | 5,463,240 |
| Գրավով ապահովված բանկային վարկ | USD | 8.75% | 2028 | 14,997,664 | 14,997,664 | - | - |
| Գրավով չապահովված վարկային գիծ բաժնետերերից | USD | 8.00% | 2023 | - | - | 399,710 | 399,710 |
| Գրավով չապահովված փոխառություն բաժնետերերից | USD | 8.00% | 2023 | - | - | 355,921 | 355,921 |
| Գրավով ապահովված փոխառություն այլ կապակցված կողմից | USD | 5.00% | 2030 | 1,170,458 | 1,170,458 | 1,090,159 | 1,090,159 |
| | USD | 9.50% | 2027 | 812,109 | 812,109 | 789,315 | 789,315 |

| հազ. դրամ | Արժույթ | Անվանակ. տոկոսադր. | Մարման տարի* | 31 դեկտեմբերի 2023թ. Անվանակ. արժեք | 31 դեկտեմբերի 2023թ. Հաշվեկշռ. արժեք | 31 դեկտեմբերի 2022թ. Անվանակ. արժեք | 31 դեկտեմբերի 2022թ. Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գրավով ապահովված փոխառություն այլ կապակցված կողմից | AMD | 12.00% | 2027 | 2,364,295 | 2,364,295 | 2,368,162 | 2,368,162 |
| Գրավով ապահովված փոխառություն այլ կապակցված կողմից | USD | 7.50% | 2027 | 1,852,510 | 1,852,510 | 1,810,419 | 1,810,419 |
| Գրավով չապահովված փոխառություն այլ կապակցված կողմից | EUR | 6 month Euribor+6% | 2027 | 3,333,214 | 3,333,214 | 3,129,434 | 3,129,434 |
| Գրավով ապահովված փոխառություն այլ կապակցված կողմից | EUR | 6.50% | 2023 | - | - | 3,490,462 | 3,490,462 |
| Գրավով չապահովված փոխառություն այլ կապակցված կողմից | EUR | 5.5%-8.5% | 2028 | 5,462,974 | 5,462,974 | 4,867,177 | 4,867,177 |
| Գրավով ապահովված փոխառություններ այլ կապակցված կողմից | USD | 6.00% | 2028 | 2,888,537 | 2,888,537 | 2,693,222 | 2,693,222 |
| | | | | **40,819,755** | **40,819,755** | **42,690,728** | **42,690,728** |

* Մարման տարին ներկայացված է 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված մնացորդների համար՝ այդ պահին գործող փոփոխված համաձայնագրերի հիման վրա:

Խմբի գրավով ապահովված բանկային վարկերի դիմաց գրավադրված են հիմնական միջոցները (Ծանոթագրություն 10), «Յուքոմ» ՓԲԸ-ի բաժնետոմսերը և բանկային հաշիվների շրջանառությունը:

**բ/ Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի համադրում**

*Այլ վարկեր և փոխառություններ*

| հազ. դրամ | Այլ վարկեր և փոխառություններ 2023թ. | Այլ վարկեր և փոխառություններ 2022թ. |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի** | **42,690,728** | **53,531,099** |
| **Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի հետ կապված** | | |
| Տրված վարկեր և փոխառություններ | 15,580,957 | - |
| Փոխառությունների մարում | (14,329,430) | (1,768,090) |
| Վճարված տոկոսներ | (3,188,843) | (2,393,021) |
| **Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի հետ կապված** | **(1,937,316)** | **(4,161,111)** |
| **Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ** | **1,438,549** | **(9,934,046)** |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Վարկի մարումներից հրաժարում (Ծանոթագրություն 6) | (4,356,835) | - |
| Տոկոսային ծախս | 2,984,629 | 3,254,786 |
| **Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ** | **(1,372,206)** | **3,254,786** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **40,819,755** | **42,690,728** |

Թողարկված պարտքային արժեթղթեր

| հազ. դրամ | Թողարկված պարտքային արժեթղթեր | |
|---|---|---|
| | 2023թ. | 2022թ. |
| **Մնացորդը առ 1 հունվարի** | - | **2,676,646** |
| **Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի հետ կապված** | | |
| Արժեթղթերի մարում | - | (2,370,997) |
| Վճարված տոկոսներ | - | (120,831) |
| **Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | - | **(2,491,828)** |
| **Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ** | - | **(159,091)** |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Տոկոսային ծախս | - | 76,858 |
| Այլ փոփոխություններ | - | (102,585) |
| **Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ** | - | **(25,727)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | - | - |

## 20. Պահուստներ

| հազ. դրամ | Տեղանքի վերականգնում | |
|---|---|---|
| | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
| **Մնացորդը տարեսկզբի դրությամբ** | **2,344,938** | **1,868,245** |
| Տարվա ընթացքում (հակադարձված)/ձևավորված պահուստներ | (669,740) | 362,226 |
| Տարվա ընթացքում օգտագործված պահուստներ | (7,524) | (7,391) |
| Ձեղչի ծախսագրում | 128,727 | 121,858 |
| **Մնացորդը տարեվերջի դրությամբ** | **1,796,401** | **2,344,938** |

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Խմբի կողմից իր ցանցի համար վարձակալված տարածքները պետք է վերականգնվեն իրենց սկզբնական վիճակի, և տեղադրված ակտիվները պետք է հանվեն վարձակալության պայմանագրերի դադարեցումից հետո: Պահուստը գնահատվել է հաշվի առնվելով վերականգնման ծախսումների գումարին և ժամկետին վերաբերող ռիսկերը: Գնահատումների համաձայն՝ տարածքի վերականգնման համար պահանջվող միջին ժամկետը կազմում է 25 տարի հաշվետու ամսաթվից՝ հիմք ընդունելով տեղադրված ակտիվների տնտեսական ծառայության ժամկետը և ակնկալվող ապագա տեխնոլոգիական փոփոխությունները: Վերականգնման ծախսումների ներկա արժեքը որոշվել է զեղչելով գնահատված վերականգնման ծախսումները ոչ ռիսկային անվանական 5.41% տոկոսադրույքով (2022թ.-ին՝ 5.49%): Հաշվի առնելով պարտավորության երկարաժամկետ բնույթը՝ պահուստի գնահատման հետ կապված հիմնական անորոշությունը վերաբերում է այն ծախսումներին, որոնք Խումբը կկրի, և վերականգնման ժամկետներին:

Տեղանքի վերականգնման ծախսումների գծով պահուստ ձևավորելիս՝ ղեկավարությունը խորհրդակցել է իր ներքին ինժեներների հետ, որոնք դիտարկել են ցանցի տարածքների տարբեր տեսակները, ապամոնտաժման համար անհրաժեշտ աշխատանքները և յուրաքանչյուր աշխատանքի համար պահանջվող ծախսերի միջին գումարը:

## 21. Պայմանագրի գծով պարտավորություններ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|---|---|---|
| ***Ոչ ընթացիկ պարտավորություններ*** | | |
| ՕԱԻ պայմանագրերի գծով ստացված կանխավճարներ | 6,965,916 | 7,449,676 |
| Հետաձգված հասույթ ցանցի միացման ծառայության գծով | 91,235 | 88,058 |
| | **7,057,151** | **7,537,734** |
| ***Ընթացիկ պարտավորություններ*** | | |
| Բաժանորդներից որպես կանխավճար ստացված հատուցումներ | 317,783 | 284,998 |
| ՕԱԻ պայմանագրերի գծով ստացված կանխավճարներ | 475,766 | 444,435 |
| Հետաձգված հասույթ ցանցի միացման ծառայության գծով | 56,045 | 77,342 |
| | **849,594** | **806,775** |

## 22. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
|---|---|---|
| ***Ոչ ընթացիկ կրեդիտորական պարտքեր*** | | |
| Ռադիոհաճախականության վճար | 27,318,405 | - |
| | **27,318,405** | - |
| ***Ընթացիկ կրեդիտորական պարտքեր*** | | |
| Ռադիոհաճախականության վճար | 5,159,790 | 5,357,315 |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 2,631,471 | 5,240,931 |
| Արձակուրդի պահուստ | 800,857 | 770,996 |
| Վճարվելիք ԱԱՀ | 451,101 | 756,324 |
| Վճարվելիք այլ հարկեր | 246,431 | 259,224 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 812,278 | 586,871 |
| | **10,101,928** | **12,971,661** |
| **Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր** | **37,420,333** | **12,971,661** |

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

## 23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

### (ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Ղեկավարության գնահատմամբ բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին, ինչը պայմանավորված է ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթով կամ երկարաժամկետ ակտիվների և պարտավորությունների համար գործող շուկայական տոկոսադրույքների հետ մոտավոր համապատասխանությամբ:

### (բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

**Ռիսկերի կառավարման հիմունքներ**

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և հսկողության համար: Խմբի ղեկավարությունը քաջատեղյակ է տվյալ ոլորտի ռիսկերին և խնդիրներին: Քաղաքական, սոցիալական և տնտեսական գործոնները դիտարկվում են կուտակային հիմունքով՝ ռազմավարական որոշումներ կայացնելու համար: Բացի այդ, ղեկավարությունը դասընթացների և այլ գործողությունների միջոցով նպատակ ունի ձևավորել հսկողության կանոնակարգված և կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

**(գ) Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի գծով:
Ֆինանսական ակտիվների և պայմանագրի գծով ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին: Ստորև ներկայացված է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին հաշվետու ամսաթվի դրությամբ.

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | 2023թ. | 2022թ. |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 6,310,421 | 6,941,406 |
| Պայմանագրի գծով ակտիվներ | - | 158,005 |
| Տրամադրված փոխառություններ | 1,376,893 | 1,376,893 |
| Բանկային հաշիվների մնացորդներ և դրամական միջոցներ ճանապարհին | 885,349 | 905,877 |
| | **8,572,663** | **9,382,181** |

***Առևտրային դեբիտորական պարտքեր***

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի բնութագրերից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Խմբի հաճախորդների բազայի պարտքային ռիսկի վրա, այդ թվում՝ այն երկրին բնորոշ պարտազանցման ռիսկը, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում հաճախորդները: Հասույթի կենտրոնացման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ում:

Խումբն ապրանքներ է վաճառում և ծառայություններ է մատուցում ֆիզիկական և իրավաբանական անձանց: Խումբը չունի այնպիսի հաճախորդ, որի հետ գործարքներին բաժին է ընկնում վաճառքի գործառնություններից ստացված հասույթի 10%-ը: Խումբը կառավարում է պարտքային ռիսկը պահանջելով կանխավճարներ խոշոր հաճախորդներից երկարաժամկետ պայմանագրերի դեպքում:

Այլ պայմանագրերի համար Խումբը գնահատում է հաճախորդների վճարունակությունը՝ նախքան վճարման և սպասարկման ստանդարտ պայմաններն առաջարկելը: Իրավաբանական անձանց և վերջնական օգտատեր իրավաբանական անձանց համար Խումբը պարտքային ռիսկը վերահսկում է անհատական հիմունքով, գնահատելով յուրաքանչյուր հաճախորդի վճարունակությունը, հաշվի առնելով վճարումների ուշացումները, գործունեության ոլորտը, ժամկետայնությունը և նախկինում ֆինանսական դժվարությունների առկայության հանգամանքը:

Խումբը չի պահանջում գրավ առևտրային դեբիտորական պարտքերի համար:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն՝ ըստ աշխարհագրական տարածաշրջանների.

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | 2023թ. | 2022թ. |
| Հայաստանի Հանրապետություն | 838,224 | 2,254,359 |
| Մերձավոր Արևելքի երկրներ | 3,955,702 | 3,558,381 |
| Եվրոյի գոտու երկրներ | 1,004,126 | 768,875 |
| ԱՊՀ այլ երկրներ | 234,508 | 119,913 |
| Ամերիկայի Միացյալ Նահանգներ | 28,885 | 8,398 |
| Այլ երկներ | 248,976 | 231,480 |
| | **6,310,421** | **6,941,406** |

Խմբի ամենախոշոր հաճախորդին՝ բջջային կապի օպերատորին և մեծածախ հաճախորդին առևտրային դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքից բաժին է ընկնում 3,606,372 հազար դրամ գումար 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,434,454 հազար դրամ):

**Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում իրավաբանական և ֆիզիկական անձանց համար**

Իրավաբանական անձանց գծով դեբիտորական պարտքերը, որոնց մնացորդը գերազանցում է 20,000 հազար դրամը, Խումբը գնահատում է անհատական հիմունքով: Խումբը պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիքին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ տարբեր տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են կորուստ կրելու ռիսկը կանխատեսելու համար (ներառելով, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝ արտաքին վարկանիշներ, դրամական հոսքերի կանխատեսումներ և հաճախորդների մասին մամուլում առկա տեղեկատվություն), և կիրառելով պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակները սահմանվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտազանցման տեղի ունենալու ռիսկի մասին և համընկնում են «Moody's» վարկանիշային գործակալության արտաքին պարտքային վարկանիշների սահմանումների հետ: Անհատական հիմունքով գնահատվող առևտրային դեբիտորական պարտքերի համար ակնկալվող պարտքային կորուստները Խումբը գնահատում է հիմք ընդունելով ժամկետանցության կարգավիճակը և վերջին մեկ տարվա ընթացքում պարտքային կորուստներ կրելու փաստացի փորձը:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն պարտքային ռիսկին ենթարկվածության, ակնկալվող պարտքային կորուստների և անհատական հիմունքով գնահատվող առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային որակի վերաբերյալ համապատասխանաբար 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| 2023թ.<br>հազ. դրամ | Ամբողջ ժամկետում ԱՊԿ, չարժեզրկված | Ամբողջ ժամկետում ԱՊԿ, արժեզրկված | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Ընդամենը անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձինք** | **2,873,433** | **3,669,522** | **6,542,955** |
| Ակնկալվող պարտքային կորուստներ | (29,645) | (1,694,773) | (1,724,418) |
| **Անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձինք, զուտ** | **2,843,788** | **1,974,749** | **4,818,537** |

| 2022թ.<br>հազ. դրամ | Ամբողջ ժամկետում ԱՊԿ, չարժեզրկված | Ամբողջ ժամկետում ԱՊԿ, արժեզրկված | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Ընդամենը անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձինք** | 2,523,221 | 3,613,072 | 6,136,293 |
| Ակնկալվող պարտքային կորուստներ | (7,328) | (2,151,339) | (2,158,667) |
| **Անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձինք, զուտ** | **2,515,893** | **1,461,733** | **3,977,626** |

Խումբը պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ այն տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են կորստի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին պարտքային վարկանիշներ, տեղեկատվություն հնարավոր ֆինանսական դժվարությունների և ժամկետանց օրերի վերաբերյալ), և կիրառելով պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն խմբային հիմունքով գնահատվող իրավաբանական և ֆիզիկական անձանց առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին ենթարկվածության և ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| 2023թ.<br>հազ. դրամ | Խմբային հիմունքով գնահատված իրավաբանական անձինք՝ ներառյալ ԱԿՊ | ԱԿՊ | ԱԿՊ մակարդակը | Խմբային հիմունքով գնահատված իրավաբանական անձինք՝ առանց ԱԿՊ |
|---|---|---|---|---|
| Ոչ ժամկետանց | 887,572 | (2,504) | 0.3% | 885,068 |
| 0 - 30 օր ժամկետանց | 34,544 | (4,412) | 12.8% | 30,132 |
| 31 - 90 օր ժամկետանց | 56,171 | (15,408) | 27.4% | 40,763 |
| 91 - 180 օր ժամկետանց | 52,929 | (19,334) | 36.5% | 33,595 |
| 181 - 270 օր ժամկետանց | 38,573 | (24,494) | 63.5% | 14,079 |
| 271 - 365 օր ժամկետանց | 12,250 | (11,142) | 91.0% | 1,108 |
| Ավելի քան մեկ տարի ժամկետանց | 395,383 | (395,383) | 100.0% | - |
| | **1,477,422** | **(472,677)** | **32.0%** | **1,004,745** |

| 2022թ.<br>հազ. դրամ | Խմբային հիմունքով գնահատված իրավաբանական անձինք՝ ներառյալ ԱԿՊ | ԱԿՊ | ԱԿՊ մակարդակը | Խմբային հիմունքով գնահատված իրավաբանական անձինք՝ առանց ԱԿՊ |
|---|---|---|---|---|
| Ոչ ժամկետանց | 632,168 | (6,889) | 1.1% | **625,279** |
| 0 - 30 օր ժամկետանց | 168,797 | (5,771) | 3.4% | **163,026** |
| 31 - 90 օր ժամկետանց | 104,400 | (9,195) | 8.8% | **95,205** |
| 91 - 180 օր ժամկետանց | 68,251 | (16,312) | 23.9% | **51,939** |
| 181 - 270 օր ժամկետանց | 38,694 | (17,140) | 44.3% | **21,554** |
| 271 - 365 օր ժամկետանց | 31,783 | (30,493) | 95.9% | **1,290** |
| Ավելի քան մեկ տարի ժամկետանց | 600,253 | (600,253) | 100.0% | **-** |
| | **1,644,346** | **(686,053)** | 41.7% | **958,293** |

| 2023թ.<br>հազ. դրամ | Խմբային հիմունքով գնահատված ֆիզիկական անձինք՝ ներառյալ ԱԿՊ | ԱԿՊ | ԱԿՊ մակարդակը | Խմբային հիմունքով գնահատված ֆիզիկական անձինք՝ առանց ԱԿՊ |
|---|---|---|---|---|
| Ոչ ժամկետանց | 414,405 | (22,608) | 5% | 391,797 |
| 0 - 30 օր ժամկետանց | 72,483 | (21,893) | 30% | 50,590 |
| 31 - 90 օր ժամկետանց | 50,582 | (26,166) | 52% | 24,416 |
| 91 - 180 օր ժամկետանց | 46,836 | (33,277) | 71% | 13,559 |
| 181 - 270 օր ժամկետանց | 41,778 | (36,076) | 86% | 5,702 |
| 271 - 365 օր ժամկետանց | 34,253 | (33,177) | 97% | 1,076 |
| Ավելի քան մեկ տարի ժամկետանց | 1,656,169 | (1,656,169) | 100% | - |
| | **2,316,506** | **(1,829,366)** | **79.0%** | **487,140** |

| 2022թ.<br>հազ. դրամ | Խմբային հիմունքով գնահատված ֆիզիկական անձինք՝ ներառյալ ԱԿՊ | ԱԿՊ | ԱԿՊ մակարդակը | Խմբային հիմունքով գնահատված ֆիզիկական անձինք՝ առանց ԱԿՊ |
|---|---|---|---|---|
| Ոչ ժամկետանց | 1,942,519 | (14,361) | 0.7% | **1,928,158** |
| 0 - 30 օր ժամկետանց | 48,237 | (9,834) | 20.4% | **38,403** |
| 31 - 90 օր ժամկետանց | 35,100 | (16,230) | 46.2% | **18,870** |
| 91 - 180 օր ժամկետանց | 200,316 | (189,192) | 94.5% | **11,124** |
| 181 - 270 օր ժամկետանց | 26,828 | (24,390) | 90.9% | **2,438** |
| 271 - 365 օր ժամկետանց | 29,509 | (23,015) | 78.0% | **6,494** |
| Ավելի քան մեկ տարի ժամկետանց | 1,311,338 | (1,311,338) | 100.0% | **-** |
| | **3,593,847** | **(1,588,360)** | 44.2% | **2,005,487** |

Խումբն օգտագործում է պահուստավորման մատրիցա անհատական հիմունքով չգնահատվող իրավաբանական անձանցից ստացվելիք առևտրային դեբիտորական պարտքերի և ֆիզիկական անձանցից ստացվելիք առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար, որը ներառում է մեծ թվով փոքր գումարով մնացորդներ:

Կորստի մակարդակը հաշվարկվում է «roll rate» մեթոդով, որը հիմնված է այն հավանականության վրա, որ դեբիտորական պարտքը կանցնի ժամկետանցությունից մինչ դուրս գրում հաջորդական փուլերով: «Roll rate»-երը հաշվարկվում են առանձին հիմունքով տարբեր սեգմենտների հաճախորդների համար՝ հիմք ընդունելով գնված ծառայության տեսակը: Կորստի մակարդակը հիմնված է վերջին երկու տարիների ընթացքում կրած փաստացի պարտքային կորուստների վրա: Խմբային հիմունքով գնահատվող դեբիտորական պարտքերի համար կիրառվում է 100% արժեզրկման դրույք ավելի քան 365 օր ժամկետանց հաճախորդների համախառն առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով: Պակաս ժամկետով ժամկետանց առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով կիրառվում են արժեզրկման ավելի ցածր դրույքներ:

***Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններ***

Ստորև ներկայացված է առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի փոփոխությունները տարվա ընթացքում.

| **հազ. դրամ** | **2023թ.** | **2022թ.** |
|---|---|---|
| Մնացորդը տարեսկզբի դրությամբ | **(4,433,081)** | **(4,628,054)** |
| Ճանաչված արժեզրկումից կորուստ | (227,286) | 155,257 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ | (27,616) | 57,186 |
| Դեբիտորական պարտքերի դուրսգրում | 661,522 | (17,470) |
| **Մնացորդը տարեվերջի դրությամբ** | **(4,026,461)** | **(4,433,081)** |

***Բանկային հաշիվների մնացորդներ***

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 787,068 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 776,514 հազար դրամ): Բանկային հաշիվների ընդհանուր մնացորդներից 599,155 հազար դրամ գումարը պահվում է Ba3-B2 պարտքային վարկանիշով հայկական բանկերում:

Խմբի գնահատմամբ բանկերում պահվող ընթացիկ հաշիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում հիմնականում վերջիններիս կարճաժամկետայնության պատճառով:

**(դ) Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Խմբի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները կատարելու համար՝ թե՛ սովորական, թե՛ արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Խմբի հեղինակությունը վտանգի ենթարկելու:

Այս նպատակով Խումբը կատարում է դրամական հոսքերի կարճաժամկետ կանխատեսումներ՝ հիմք ընդունելով գործառնական և ներդրումային գործունեության բնույթով պայմանավորված ֆինանսական պահանջները: Որպես կանոն, այս պահանջները կանխատեսվում են տարեկան և ամսական կտրվածքով: Խումբը ձգտում է ապահովել դրամական միջոցների և դրանց համարժեքների այնպիսի չափ, որը կգերազանցի ֆինանսական պարտավորություններից (բացառությամբ առևտրային կրեդիտորական պարտքերից) ակնկալվող դրամական միջոցների արտահոսքը հաջորդ 60 օրերի ընթացքում:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը՝ ներառյալ հաշվարկված տոկոսների վճարումները.

## 2023թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

| 2023թ. հազ. դրամ | Հաշվեկշռ. արժեք | Պայմանագրային դրամական հոսքեր | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | Ցպահանջ և մինչև 2 ամիս | 2-12 ամիս | 1-2 տարի | 2-5 տարի | Ավելի քան 5 տարի |
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություն-ներ** | | | | | | | |
| Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր | 21,834,140 | 29,759,889 | 838,532 | 1,543,056 | 1,974,886 | 25,403,415 | - |
| Գրավով չապահովված բանկային վարկ | 697,661 | 834,192 | 834,192 | - | - | - | - |
| Գրավով չապահովված բանկային վարկ բաժնետիրոջից | 403,858 | 439,835 | 6,876 | 432,959 | - | - | - |
| Գրավով չապահովված փոխառություն բաժնետերերից | 2,888,539 | 3,820,194 | 483,279 | 123,513 | 147,732 | 443,195 | 2,622,475 |
| Գրավով չապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից | 6,633,395 | 8,028,541 | 1,221,679 | 269,835 | 321,863 | 5,178,300 | 1,036,864 |
| Գրավով ապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից | 8,362,163 | 10,532,875 | 181,734 | 1,214,938 | 1,803,082 | 7,333,121 | - |
| Այլ պարտավորություններ | 120,607 | 120,607 | 120,607 | - | - | - | - |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 5,159,790 | 5,159,790 | 5,159,790 | - | - | - | - |
| Վճարվելիք ռադիոհաճախակա-նության օգտագործման վճար | 29,949,876 | 42,774,696 | 2,631,471 | 2,676,215 | 2,676,215 | 10,704,860 | 24,085,935 |
| Վարձակալության գծով կրեդիտորական պարտքեր | 8,996,970 | 13,321,554 | 696,838 | 1,499,237 | 1,780,893 | 5,773,562 | 3,571,024 |
| | **85,046,998** | **114,792,173** | **12,174,998** | **7,759,753** | **8,704,671** | **54,836,453** | **31,316,298** |

| 2022թ. հազ. դրամ | Հաշվեկշռ. արժեք | Պայմանագրային դրամական հոսքեր | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | Ցպահանջ և մինչև 2 ամիս | 2-12 ամիս | 1-2 տարի | 2-5 տարի | Ավելի քան 5 տարի |
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր | 22,057,900 | 23,359,508 | 2,699,926 | 201,277 | 797,956 | 17,008,331 | 2,652,018 |
| Գրավով չապահովված բանկային վարկ բաժնետիրոջից | 394,476 | 415,384 | 4,680 | 410,704 | - | - | - |
| Գրավով չապահովված փոխառություն բաժնետերերից | 2,693,222 | 2,863,477 | 322,491 | 120,419 | 2,420,567 | - | - |
| Գրավով չապահովված փոխառություններ այլ կապակցված կողմերից | 5,957,336 | 6,116,510 | 851,110 | 104,364 | 5,161,036 | - | - |
| Թողարկված պարտքային արժեթղթեր այլ կապակցված կողմերից | 11,587,792 | 14,921,381 | 157,463 | 793,770 | 2,604,067 | 9,754,350 | 1,611,731 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 120,609 | 120,609 | 120,609 | - | - | - | - |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 5,223,067 | 5,223,067 | 5,223,067 | - | - | - | - |
| Վճարվելիք ռադիոհաճախականության օգտագործման վճար | 5,357,315 | 5,357,315 | 5,357,315 | - | - | - | - |
| Վարձակալության գծով կրեդիտորական պարտքեր | 9,653,608 | 14,328,676 | 862,503 | 1,458,127 | 1,727,250 | 5,181,191 | 5,099,605 |
| | **63,045,325** | **72,705,927** | **15,599,164** | **3,088,661** | **12,710,876** | **31,943,872** | **9,363,354** |

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ նշանակալիորեն տարբեր գումարների չափով:

**(ե) Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Խումբը չի կիրառում հեջի հաշվառում շահույթի կամ վնասի տատանումները կառավարելու համար:

***Արժութային ռիսկ***

Խումբը ենթարկվում է արժութային ռիսկին ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթներով՝ հիմնականում ԱՄՆ դոլարով և եվրոյով արտահայտված գնումների և փոխառությունների հետ կապված:

***Ենթարկվածությունն արժութային ռիսկին***

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արժութային ռիսկին.

| հազ. դրամ | ԱՄՆ դոլարով արտահայտ-ված 2023թ. | Եվրոյով արտահայտ-ված 2023թ. | ԱՄՆ դոլարով արտահայտ-ված 2022թ. | Եվրոյով արտահայտ-ված 2022թ. |
|---|---|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 3,523,893 | 1,093,772 | 3,247,241 | 1,365,410 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 332,946 | 98,318 | 28,558 | 12,935 |
| Տրամադրված փոխառություններ | - | 339,154 | - | 339,154 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | (2,764,049) | (577,661) | (972,653) | (1,330,737) |
| Վարկեր և փոխառություններ | (29,659,233) | (8,796,227) | (25,369,867) | (14,952,697) |
| Այլ պարտավորություններ | (98,364) | - | (95,741) | - |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | - | - | - |
| **Համախառն ենթարկվածություն** | **(28,664,807)** | **(7,842,644)** | **(23,162,462)** | **(14,565,935)** |

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

| ՀՀ դրամով | Միջին փոխարժեք | | Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| | 2023թ. | 2022թ. | 2023թ. | 2022թ. |
| 1 ԱՄՆ դոլար | 392.50 | 435.47 | 404.79 | 393.57 |
| 1 եվրո | 424.60 | 460.29 | 447.90 | 420.06 |

### Զգայունության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և նախքան հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացվել է ենթադրելով, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ, և հաշվի չառնելով կանխատեսվող առք ու վաճառքի ազդեցությունը.

| | ԱՄՆ դոլար | Եվրո |
|---|---|---|
| **հազ. դրամ** | **Շահույթ կամ վնաս** | **Շահույթ կամ վնաս** |
| 31 դեկտեմբերի 2023թ. (10% փոփոխություն) | 2,866,481 | 784,264 |
| 31 դեկտեմբերի 2022թ. (10% փոփոխություն) | 2,316,246 | 1,456,593 |

ՀՀ դրամի փոխարժեքի 10% նվազումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կունենար համարժեք՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված արտարժույթների վրա վերը նշված գումարների չափով՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

### Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխուն տոկոսադրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

### Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքների կառուցվածքը՝ տոկոսադրույքների կտրվածքով.

| | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| **հազ. դրամ** | **2023թ.** | **2022թ.** |
| **Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ** | | |
| Ֆինանսական պարտավորություններ | (36,788,877) | 24,905,231 |
| | **(36,788,877)** | **24,905,231** |
| **Փոփոխուն տոկոսադրույքով գործիքներ** | | |
| Ֆինանսական պարտավորություններ | (4,030,874) | (17,785,495) |
| | **(4,030,874)** | **(17,785,495)** |

### Իրական արժեքի զգայունության վերլուծություն ֆիքսված տոկոսադրույքով գործիքների համար

Խումբը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքները չի հաշվառում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

### Դրամական միջոցների զգայունության վերլուծություն փոփոխուն տոկոսադրույքով գործիքների համար

Հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունը 100 բազիսային կետով կավելացներ (կնվազեցներ) շահույթը կամ վնասը նախքան հարկումը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ:

| | Շահույթ կամ վնաս | |
|---|---|---|
| **հազ. դրամ** | **100 բկ աճ** | **100 բկ նվազում** |
| **2023թ.** | | |
| Փոփոխուն տոկոսադրույքով գործիքներ | (155,447) | 155,447 |
| **Դրամական հոսքերի զգայունություն (զուտ)** | **(155,447)** | **155,447** |
| **2022թ.** | | |
| Փոփոխուն տոկոսադրույքով գործիքներ | (145,841) | 145,841 |
| **Դրամական հոսքերի զգայունություն (զուտ)** | **(145,841)** | **145,841** |

## 24. Պայմանական դեպքեր

### (ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբն ամբողջովին չի ապահովագրել իր հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց: Քանի դեռ Խումբը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### (բ) Դատական վարույթներ

Խումբը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի համախմբված ֆինանսական վիճակի վրա:

### (գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիների համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար, սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվում են շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը հարկային տարում.

- միջսահմանային գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջսահմանային գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունը այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

### (դ) Պայմանագրային պարտավորություններ

Ընկերությունը ունի հեռահաղորդակցության սարքավորումների մատակարարումների պայմանագրային պարտավորություններ: 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պարտավորությունների ընդհանուր արժեքը կազմում է 6,493,160 հազար դրամ (2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա չէ):

## 25. Կապակցված կողմեր

### (ա) Հսկողություն

Խմբի սեփականատերերի կազմը հետևյալն է.

| | |
|---|---|
| «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ | 29.09% |
| Արամ Խաչատրյան | 24.35% |
| Գուրգեն Խաչատրյան | 11.91% |
| Արտյոմ Խաչատրյան | 11.91% |
| «Ֆորա-Բանկ» բաժնետիրական առևտրային բանկ | 10.50% |
| Սուրիկ Պողոսյան | 6.30% |
| Ալեքսանդր Եսայան | 2.97% |
| Հայկ Եսայան | 2.97% |

«ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ-ի սեփականատերերն են Գուրգեն Խաչատրյանը և Արտյոմ Խաչատրյանը՝ բաժնետոմսերի հավասար համամասնությամբ: Խումբը չունի վերջնական հսկող կողմ:

### (բ) Գործարքներ առանցքային կառավարչական անձնակազմի հետ

#### *(i) Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրությունը*

Տարվա ընթացքում առանցքային կառավարչական անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է անձնակազմի գծով ծախսերում.

| հազ. դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևավճարներ | 849,197 | 739,351 |

### (գ) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են Խմբի այլ գործարքները կապակցված կողմերի հետ:

*(ii) Հասույթ և այլ եկամուտ*

| հազ. դրամ | Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | Մնացորդը առ 31 դեկտեմբերի | |
|---|---|---|---|---|
| | 2023թ. | 2022թ. | 2023թ. | 2022թ. |
| Ապրանքների, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք և ծառայությունների մատուցում | | | | |
| Բաժնետերերի հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ | 2,741 | 2,411 | 72,972 | 1,662 |
| Այլ կապակցված կողմեր | 1,171 | 3,265 | 629 | 680 |
| Այլ | | | | |
| Բաժնետերերի հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ | 116,574 | 4,675 | - | - |

*(iii) Ծախսեր*

| հազ. դրամ | Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | Մնացորդը առ 31 դեկտեմբերի | |
|---|---|---|---|---|
| | 2023թ. | 2022թ. | 2023թ. | 2022թ. |
| Տարածքների վարձակալություն | | | | |
| Բաժնետերերի հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ | 80,129 | 80,129 | 6,721 | 6,721 |
| Այլ ստացված ծառայություններ | | | | |
| Բաժնետերերի հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ | 105,309 | 130,473 | 2,361 | 2,255 |
| Այլ տրված կանխավճարներ | | | | |
| Բաժնետերերի հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ | 8,000 | - | - | - |

### (iv) Ստացված փոխառություններ

| հազ. դրամ | Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | Մնացորդը առ 31 դեկտեմբերի | |
|---|---|---|---|---|
| | 2023թ. | 2022թ. | 2022թ. | 2022թ. |
| Ստացված փոխառություններ | | | | |
| Բաժնետերեր | - | - | 15,399,414 | 20,632,833 |
| Բաժնետերերի հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ | - | - | 2,888,537 | - |
| Այլ | - | - | 123,064 | 120,337 |

### (v) Տրամադրված փոխառություններ

| հազ. դրամ | Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | Մնացորդը առ 31 դեկտեմբերի | |
|---|---|---|---|---|
| | 2023թ. | 2022թ. | 2023թ. | 2022թ. |
| Տրամադրված փոխառություններ | | | | |
| Բաժնետերերի հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ | - | - | 1,376,893 | 1,376,893 |

## 26. Դուստր կազմակերպություններ

2018թ. հունիսի 7-ի Ընկերությունը հիմնադրել է նոր ընկերություն՝ «Յուփեյ» ՓԲԸ:

| Դուստր կազմակերպություն | Գրանցման երկիր | 2023թ. Սեփականություն/ Ձայնի իրավունք | 2022թ. Սեփականություն/ Ձայնի իրավունք |
|---|---|---|---|
| «Յուփեյ» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | 100% | 100% |

## 27. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

## 28. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար Խմբի անդամ ընկերությունների կողմից:

### (ա) Համախմբման հիմունքներ

#### *(i) Դուստր կազմակերպություններ*

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող ընկերություններ են: Խումբը վերահսկողություն ունի կազմակերպության նկատմամբ, երբ այդ կազմակերպությունում իր ներգրավվածության արդյունքում այն ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և կազմակերպության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Անհրաժեշտության դեպքում դուստր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Դուստր կազմակերպությունում չվերահսկող բաժնեմասերին բաժին ընկնող վնասը վերագրվում է չվերահսկող բաժնեմասերին, նույնիսկ եթե դրա արդյունքում չվերահսկող բաժնեմասերի մնացորդը դառնում է բացասական:

#### *(ii) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ*

Ներխմբային հաշվարկների մնացորդները և գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են: Բաժնային մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների հետ իրականացվող գործառնություններից առաջացող չիրացված եկամուտը բացառվում է ներդրման դիմաց Խմբի կողմից ներդրման օբյեկտում ունեցած մասնակցության չափով: Չիրացված վնասը բացառվում է նույն կերպ ինչ որ և չիրացված եկամուտը՝ միայն արժեզրկման հայտանիշ չհանդիսանալու չափով:

### (բ) Հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5(դ)-ում:

### (գ) Ֆինանսական եկամուտ և ծախս

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- դեբիտորական և կրեդիտորական պարտքերի գծով զեղչի ծախսագրումը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ կորուստը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով,
- ֆինանսական ծախսերում ներառված վարձակալության գծով պարտավորության տոկոսային ծախսերը:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված

չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը դադարում է պարտքային առումով արժեզրկված լինելուց, հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հիմունքով:

**(դ) Արտարժույթով գործառնություններ**
Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են դրամի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստը իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով: Արտարժույթի վերափոխարկումից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**(ե) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել կարճաժամկետ դրամական պարգևավճարների տեսքով, եթե խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

**(զ) Շահութահարկ**

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

***(i) Ընթացիկ հարկ***

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

***(ii) Հետաձգված հարկ***

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում.

- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում բիզնեսի միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա,

- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք վերաբերում են դուստր կազմակերպություններում, ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում կատարվող ներդրումներին, այնքանով որքանով Խումբը կարող է վերահսկել ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները, և հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում, և
- այն հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գուդվիլի սկզբնական ճանաչման արդյունքում:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթի գումարը որոշվում է հակադարձման ենթակա համապատասխան հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումների մասով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Խմբի առանձին դուստր կազմակերպությունների գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ ակտիվները:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբը տվյալ պահին ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

**(է) Պաշարներ**

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման, արտադրության կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները:

(ը) Հիմնական միջոցներ

*(i) Ճանաչում և չափում*

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսումները, տեղանքի վերականգնման ծախսումները, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մաս, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

*(ii) Հետագա ծախսումներ*

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

*(iii) Մաշվածություն*

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման համար պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Վարձակալված ակտիվների գծով մաշվածությունը հաշվարկվում է վարձակալության ժամկետից և ակտիվի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտնի է, որ Խումբը ձեռք կբերի ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր բաղկացուցիչների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն հաշվետու և համադրելի ժամանակաշրջանների համար.

| | |
|---|---|
| – շենքեր | 40 տարի |
| – ցանցային ենթակառուցվածք | 5-25 տարի |
| – սարքավորումներ | 1-10 տարի |
| – փոխադրամիջոցներ | 5 տարի |
| – տնտեսական միջոցներ | 1-5 տարի |

| | |
|---|---|
| – վարձակալված հիմնական միջոցների բարելավումներ | վարձակալության ժամկետից և 20 տարի ժամկետից նվազագույնը |

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(թ) Ոչ նյութական ակտիվներ**

***(i) Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ***

Ռադիոհաճախականության օգտագործման համար վճարվող կանխավճարները դասակարգվում են որպես անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվներ: Այս ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով և տարեկան կտրվածքով վերանայվում են արժեզրկման հայտանիշների համար:

***(ii) Այլ ոչ նյութական ակտիվներ***

Խմբի կողմից ձեռքբերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

***(iii) Հետագա ծախսումներ***

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Խմբի ներսում ստեղծված գուդվիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

***(iv) Ամորտիզացիա***

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում վերջինիս օգտագործման համար պիտանի դառնալու ամսաթվից, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

| | |
|---|---|
| – լիցենզիաներ և ապրանքային նշաններ | 6-16 տարի |
| – բիլինգային համակարգ | 10 տարի |
| – այլ համակարգչային ծրագրեր | 1-10 տարի |
| – հաճախորդների բազա | 8 տարի |
| – տարողունակության ՕԱԻ | 5-15 տարի |

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(ժ) Ֆինանսական գործիքներ**

***(i) Ճանաչում և սկզբնական չափում***

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրային դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

***(ii) Դասակարգում և հետագա չափում***

**Ֆինանսական ակտիվներ**

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքում ներդրումը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

**Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում**

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը

կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրային նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

**Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե կանխավճարի գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ լրացուցիչ փոխհատուցում:

**Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ կորուստ նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, բանկային օվերդրաֆտները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

***(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում***

**Ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- Ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- Ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված

ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտում շահույթում կամ վնասում՝ փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ բանկերի կողմից ֆիքսված տոկոսադրույքների փոփոխությունները ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով բանկերն իրավունք ունեն կատարել նման փոփոխություն և Խումբը հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքը Խումբը հաշվառում է կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորստի մաս: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված պարտավորության մնացորդային ժամանակահատվածում:

***(iv) Ապաճանաչում***

**Ֆինանսական ակտիվներ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված,

ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**Տոկոսադրույքի հենանիշի բարեփոխում**

Երբ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության պայմանագրային դրամական հոսքերի որոշման հիմքը փոխվել է տոկոսադրույքի հենանիշի բարեփոխման արդյունքում, Խումբը թարմացրել է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը՝ արտացոլելու համար բարեփոխմամբ պահանջվող փոփոխությունը: Պայմանագրային դրամական հոսքերի որոշման հիմքի փոփոխությունը պահանջվում է տոկոսադրույքի հենանիշային բարեփոխմամբ, եթե առկա են հետևյալ պայմանները.

- փոփոխությունն անհրաժեշտ է որպես բարեփոխումների անմիջական հետևանք, և
- պայմանագրային դրամական հոսքերի որոշման նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին /փոփոխությունից անմիջապես առաջ/:

Երբ փոփոխություններ են կատարվել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության մեջ՝ ի լրումն տոկոսադրույքի հենանիշային բարեփոխմամբ պահանջվող դրամական միջոցների պայմանագրային հոսքերի որոշման հիմքի փոփոխության, Խումբը նախ թարմացրեց ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը՝ արտացոլելու համար բարեփոխմամբ պահանջվող փոփոխությունը: Դրանից հետո Խումբը կիրառեց հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ լրացուցիչ փոփոխությունների փոփոխման համար:

***(v) Հաշվանցում***

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Խումբը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

**(h) Բաժնետիրական կապիտալ**

*Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրվող հավելյալ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալից նվազեցում՝ առանց որևէ հարկային ազդեցությունների:

**(l) Արժեզրկում**

***(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ***

*Ֆինանսական գործիքներ և պայմանագրի գծով ակտիվներ*

Խումբը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Խմբային հիմունքով գնահատվող առևտրային դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Խմբի անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե.

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո հաջորդող 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին:

*Ակնկալվող պարտքային կորուստների չափում*

Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան

Խմբին հասանելիք դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերություն):

Ակնկալվող պարտքային կորուստները զեղչվում են ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

*Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ հաճախորդը կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

**Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

*Դուրսգրում*

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Խումբը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Խումբը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

***(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ***

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը: Գուդվիլի և օգտակար ծառայության անսահմանափակ ժամկետ ունեցող կամ շահագործման համար դեռ ոչ պիտանի ոչ նյութական ակտիվների համար փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր տարի նույն ժամանակ:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:
Գուդվիլի արժեզրկման ստուգման նպատակով՝ դրամաստեղծ միավորները, որոնց բաշխվել է գուդվիլը, միավորվում են այնպես, որպեսզի արժեզրկման ստուգման մակարդակն արտացոլի այն նվազագույն մակարդակը, որում ներքին կառավարման նպատակներով գուդվիլը ենթարկվում է մոնիտորինգի: Բիզնեսի միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը բաշխվում է դրամաստեղծ միավորների այն խմբերին, որոնք ակնկալվում է, որ օգուտներ կստանան բիզնեսի միավորման սիներգիաներից:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև վերջիններիս ներկա արժեքը՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստը բաշխվում է այնպես, որ նախ նվազեցվի դրամաստեղծ միավորին (կամ դրամաստեղծ միավորների խմբին) բաշխված գուդվիլի հաշվեկշռային արժեքը և, այնուհետև, այդ դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ համամասնորեն:

Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում: Այլ ակտիվների հետ կապված նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, պարզելու համար, թե արդյոք գոյություն ունի որևէ հայտանիշ ըստ որի արժեզրկումից կորուստը նվազել է կամ այլևս գոյություն չունի: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն դեպքում, եթե տեղի է ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այնքանով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

**(խ) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքաչափով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

***Տեղանքի վերականգնում***

Կիրառելի օրենսդրական պահանջների համաձայն՝ տեղադրված ցանցային հարմարանքների համար վարձակալված տարածքի վերականգնման գծով պահուստը ճանաչվում է հարմարանքների տեղադրման պահին:

**(ծ) Վարձակալություն**

Պայմանագրի սկզբում Խումբը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

***Խումբը՝ որպես վարձակալ***

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի մեկնարկին կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչին՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը: Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության

մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Խմբին չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Խումբը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Խումբը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Խումբը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Խմբի գնահատականի փոփոխություն, եթե Խունբը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Խումբը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունները ցածրարժեք ակտիվների վարձակալության համար:

***COVID-19 հետ կապված զիջումներ վարձակալության գծով***

Խումբը կիրառել է *«COVID-19 հետ կապված զիջումներ վարձակալության գծով - ՖՀՄՍ 16-ի փոփոխություն»*: Խումբը կիրառում է գործնական բնույթի պարզեցում, որը թույլ է տալիս չգնահատել թե արդյոք, որոշակի պահանջներ բավարարող վարձակալության գծով զիջումները, որոնք COVID-19 համավարակի ուղղակի հետևանքներն են, իրենցից ներկայացնում են վարձակալության վերափոխումներ: Խումբը գործնական բնույթի պարզեցումը հետևողականորեն կիրառում է համանման բնութագրեր ունեցող և համանման հանգամանքներում կիրառվող պայմանագրերի նկատմամբ: Վարձակալության պայմանագրերի վարձակալության գծով զիջումների հետ կապված, որոնց համար Խումբը որոշում է չկիրառել գործնական բնույթի պարզեցում, կամ որոնք չեն բավարարում գործնական բնույթի պարզեցման կիրառման պահանջները, Խումբը գնահատում է, թե արդյոք առկա է վարձակալկության վերափոխում:

***Խումբը՝ որպես վարձատու***

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի մեկնարկին կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչին՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Երբ Խումբը հանդես է գալիս որպես վարձատու, վարձակալության սկզբում այն որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական կամ գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելիս Խումբը գնահատում է, թե արդյոք վարձակալության շրջանակում փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Եթե ռիսկերն ու հատույցները փոխանցվում են, վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, այլապես՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս, Խումբը դիտարկում է որոշակի ցուցանիշներ, մասնավորապես, արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

Երբ Խումբը հանդես է գալիս որպես միջանկյալ վարձատու, այն առանձին է հաշվառում վարձակալության հիմնական պայմանագրում և ենթավարձակալությունում իր մասնաբաժինները: Խումբը ենթավարձակալությունը դասակարգում է հիմք ընդունելով վարձակալության հիմնական պայմանագրից առաջացող օգտագործման իրավունքի ձևով ակտիվը, այլ ոչ՝ հիմքում ընկած ակտիվը: Եթե վարձակալության հիմնական պայմանագիրն իրենից ներկայացնում է կարճաժամկետ վարձակալություն, որի նկատմամբ Խումբը կիրառվում է վերը նշված ազատումը, ենթավարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն:

Եթե պայմանավորվածությունը պարունակում է վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչներ, Խումբը հատուցումը պայմանագրի բաղադրիչների միջև բաշխելու համար կիրառում է ՖՀՄՍ 15:

Գործառնական վարձակալությունից ստացված վարձավճարները Խումբը ճանաչում է որպես եկամուտ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում՝ որպես «այլ հասույթ» հոդվածի մաս:

**(կ) Սեգմենտային հաշվետվություններ**

Գործառնական սեգմենտը Խմբի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեությունում, որոնցից այն կարող է վաստակել հասույթ և կրել ծախսեր, ներառյալ Խմբի

այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթը և ծախսերը: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր որոշում կայացնողի կողմից, սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Ղեկավարությունը գտնում է, որ Խումբը հանդիսանում է մեկ գործառնական սեգմենտ:

## 29. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2024թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը ժամկետից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

### *Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ*

Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՍԽ-ի կողմից, որոնք ուժի մեջ են մտնելու ապագա հաշվետու ժամանակաշրջաններում, սակայն դրանք Խումբը որոշել է վաղաժամ չընդունել:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

- Վաճառքի և վարձակալության վերադարձի պարտավորություն (Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն),
- Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում),
- Քովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի Փոփոխություններ, Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում), և
- Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն և ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ):

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

- Փոխանակելիության բացակայություն (Փոփոխություններ ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը»)

Խումբը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը: Խումբը չի հավատում, որ ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր պարտավորությունների դասակարգման վրա: Խումբը չի ակնկալում, որ IASB-ի կողմից թողարկված այլ ստանդարտներ, որոնք դեռ կիրառության մեջ չեն մտել, էական ազդեցություն կունենան Ընկերության վրա: